

ՀԻՇԱՏԱԿ ՄՆԱԾՈՂՆԵՐԻՆ

ՀԱԿՈՔ ԺԱՄԿՈԶՅԱՆ



3(47-925)
J-22

ՀԱՅՈՒ ՓԱՄԿՈՉՅԱՆ

ՀԻՇԱՏԱԿ
ՄՆԱԾՈՂՆԵՐԻՆ

4018



«ԴԱՆԼ» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ, 2003

ՀՏԴ 941 (479,25)
ԳՍԴ 63.3 (2Հ)
Ժ 225

Արևելահայերենի վերածեց՝
ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆԸ

Ժ 225 Ժամկտյան, Հ.
Հիշատակ մնացողներին: - Եր.: ԴԱԼԼ, 2003.- 120 էջ:

Արևմտահայաստանի Սեբաստիայի նահանգի Կյուրին քաղաքի վերապրող Հակոբ Ժամկոյանի հուշերն են անխռով մանկության, ավանդապահ կենցաղի ու բարքերի, ապա նաև ցեղասպանության նախնիների, տարագրության, բնօրրանի անանց կարողի մասին, որոնք իրենց անմիջականությամբ ու հուզականությամբ հավերժացնում են պատմական հայրենիքի նշխարները, գալիք սերունդներին հավատարմության, անժամկետանց պահանջարկության պարզամը փոխանցում:

Ժ 0503020913
0189(01)-2003 2003

ԳՍԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-915-3-7

© Հակոբ (Սկոր) Ժամկոյան, Հազլետ, Նյու Ջերսի, ԱՄՆ, 1998, 2003
© Hagop (Agop) Jamgotchian, Hazlet, New Jersey, USA, 1998, 2003



ՎԵՐԱՊՐՈՂԻ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Նախաբանի փոխարեն

Համոզված, ավելին, հավատացած եմ՝ ոչ մի ընթերցողի անտարբեր չի թողնելու այս գիրքը: Հակոբ Ժամկոչյանը գրող չէ և, իհարկե, իննսուն տարեկանում գիրք չէր գրի, եթե չարունակեր ապրել բնօրրանում, հոր, պապերի պես ջուլհակ դառնար, զավակներ, թոռներ ունենար ու, երբ ժամանակը գար, հոր, պապերի պես հավիտենական անդորրը գտներ Կյուրինի հանգստարանում:

Սակայն, 1915 թվականը ընդհատեց նրա մանկությունը, բոլոր Կյուրինցիների հետ տեղահան արեց, ու նա ծննդավայրը վերադառնալու, տեսնելու բախտավորությունն այլևս չունեցավ: Հակոբ Ժամկոչյանն իր երկար, դեգերումներով լի կյանքը ստիպված է եղել ապրել երեք աշխարհամասերում, խոսել է վեց լեզուներով, բայց բնօրրանը, հարազատ բարբառը չի մոռացել: Ամենակարևորը՝ ոչ մի կերպ չի հաշտվել ահավոր անարդարության հետ: Ինչո՞ւ խլեցին ու ավերեցին իր ծննդավայրը, հարազատներին խողխողեցին, իրենց գաղթական դարձրին, նման աննախադեպ հանցագործությունը երբեք պիտի պատժվի՞, կորուստը հատուցվի՞ ահա հարցեր, որոնք բոլոր վերապրողների պես արդեն ութսունյոթ տարի տալիս է նա ու պատասխան չի ստանում: Բայց և չի հուսահատվում, ամերիկյան բարեկեցությունը, ապահովությունը նրա հավատարմությունը բնօրրանի հանդեպ չեն սասանում: Այդ հավատարմությունն է Հակոբ Ժամկոչյանն արտահայտել իր անպաճույճ, ճշգրիտ լինելու չափավերական հուշերում (նման անցյալը չի մոռացվում, անհնար

է մոռանալ) ու որպէս կտակ, պատգամ ավանդել զավակներին, թոռներին ու ծոռներին:

Հակոբ ժամկոչյանը երջանիկ ծնող է: Նրա զավակները, թոռները ծնվել են աշխարհի տարբեր երկրներում, տարբեր լեզուներով են կրթութիւն ստացել, բայց զարմանալիորեն հայ, ավելին՝ կյուրինցի են մնացել: Դուստրը՝ Մելինեն մեն-մենակ հոր ծննդավայրն է հասել, նրա կարոտը մասամբ գոնե մեղմելու համար, հող ու Զուր, ծիրանի անուշ է բերել, կրտսեր որդին՝ Արան, որպէսզի բոլորին մատչելի դառնա, հուշերը անգլերեն է թարգմանել, անդրանիկ որդին՝ Հարութիւնը, թոռները՝ Լորին ու Թալինը կազմել են ընտանեկան տոհմածառը, մյուս թոռները՝ Սեպուհը կատարել է նախնական համակարգչային համադրումը, Շանթը որոշակիացրել իրենց արմատները, ճշտել ինքնութիւնը: Հենց զավակների, թոռների ցանկութեամբ է Հակոբ ժամկոչյանի գիրքը լույս տեսնում արեւելահայերեն, արեւմտահայերեն ու անգլերեն: Եվ դա բնական է, որովհետեւ պատվիրանները, որ նրանց թողնում է հուշագիրը, ուղղված են մեզ՝ բոլորիս: Այդ պատվիրանները, շուտ կամ ուշ, մենք պիտի իրագործենք:

Բոլորս միասին:

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆ
24 ապրիլի, 2002 թ.

Հետգրութիւն - 2002 թվականի դեկտեմբերի 15-ին այս հուշապատումի փորձանմուշները ձեռքին, Հազլետի իր բնակարանում, 97 տարեկան հասակում վախճանվեց Հակոբ ժամկոչյանը: Նրա միակ սփոփանքը մեզ այս գիրքը՝ իր պատգամն ու պատվիրանն ավանդելն էր, մերը՝ թերեւս այն, որ նրա հոգին իր բնօրրանը՝ Սեբաստիայի նահանգի կյուրին քաղաքը վերադարձավ:

Ընդմիջտ:

Գրիգոր Զանիկյան

Բնակարանի արձանագրություն
Հայկական համագործակցության
համաժողովի 5-րդ նիստի քննարկում
համաձայնությամբ



Հայկական համագործակցության
համաժողովի 5-րդ նիստի քննարկում
համաձայնությամբ



Նախ իմ պարտքն եմ համարում շնորհակալություն հայտնել ընտանիքիս բոլոր անդամներին, որոնցից յուրաքանչյուրը յուրովի նպաստեց այս գրքի ստեղծմանը: Երախտապարտ եմ հատկապես կնոջս՝ Վերժինին, նա ամեն կերպ քաջալերեց ինձ, պայմաններ ստեղծեց, որ սկսեմ, վերջացնեմ կյանքիս պատմության շարադրությունը: Ողորակեց գնահատում եմ դստերս՝ Մելինեի ջանքերը, որը հուշերս լուսանկարներով հավաստի դարձնելու համար ընդհուպ իմ ծննդավայրը՝ Սեբաստիայի Կյուրին քաղաքը հասավ, հայրենիքում հրատարակելու նպատակով Հայաստան ուղևորվեց: Ավագ որդիս՝ Հարությունը, թոռնուհիներս՝ Լորին ու Թալինը կազմել են մեր գերդաստանի տոհմածառը, մյուս թոռներս՝ Սեպուհը կատարել է նախնական համակարգչային համադրումը, Շանթը վերծանել երբեմն կեսդարյա վաղեմիություն ունեցող լուսանկարները, կրտսեր որդիս՝ Արան, անգլերեն է թարգմանել:

Բոլորին օրհնում ու իմ այս հուշերն եմ հիշատակ թողնում:

2002 թ., Հաղլետ



Իմ ծննդավայրը

Այս օրերին գտնվում է Թուրքիայի կենտրոնական մասում, Սեբաստիայից հարավ: Յրված քաղաք է, տարածված է երկու լեռների հովտում: Զորերից հոսում են Շուղուլ և Զախ-ձոր (Այուրինի բարբառով՝ Ճախճոր) գետակները, որոնք իրար են միանում Ղարասար կոչված հայկական գյուղի մատույցներում և, կազմելով Թոքմա գետը, խառնվում են Եփրատին: Ջրառատ էր Այուրինը, ամեն տան առջևից առվակ էր հոսում: Բնակիչները խմելու ջուրը առավոտ վաղ էին վերցնում, որ մաքուր լինի: Ջրհոր չկար:

Ասում են Այուրինի հայությունը 10-րդ դարի ընթացքում գաղթել է Ղարաբաղից¹: Բարբառները, իրոք, նման են իրար: Մինչև 1850 թվականը Այուրինի հայերը փաստորեն ստրուկ են եղել, ենթարկվել ամեն տեսակ բռնություն ու ճնշման: Պատմում էին, որ ձիով կամ էշով ճամփորդող հայը Թուրքի հանդիպելիս պարտավոր էր իջնել, մինչև անցնելը ոտքով շարունակել ճամփան:

Այդ ժամանակ, բնական է, գրել-կարդալ իմացող չատ քիչ մարդ է եղել Այուրինում: Մեր մեծերն ասում էին, որ ժողովուրդը բացի կյանքի, ապրուստի դժվարություններից ուրիշ ոչ մի բանի մասին չէր կարող մտածել: 1850-ական թվականներից հետո միայն հայերը հնարավորություն են ունեցել դպրոցներ բացել: Մեծ հայրս՝ Հակոբ վարժապետ ժամկոչյանը բավական ուսյալ անձնավորություն է եղել, ազգանվեր գործունեություն



Կյուրինի Համայնապատկերը:

ծավալել: Կյուրինում առաջինը նա է իր աշակերտներին սովորեցրել Նահապետ Ռուսինյանի անմահ «Կիլիկիան»: Օսմանյան կառավարությունը, սակայն, դա հեղափոխական քարոզչություն է համարել, բանտարկել է մեծ Հորս: Ավելին, 1895-ի ջարդերի ժամանակ նրան, հենց իր դռան շեմին, կացնահարել են: Հոգին ավանդելուց առաջ, վերջին պահին, Հակոբ վարժապետն իր երեք որդիներին՝ Մանվելին, Ստեփանին, Հարությունին կանչել, մահվան մահճում միայն մի խրատ է տվել, պատգամ թողել. «Մզկիթ կեցած տեղ մի կենաք»:

1915-ին Կյուրին քաղաքի բնակչությունը 30000-ից 35000 էր, որի ավելի քան 2/3-ը՝ այսինքն մոտ 20000-ը հայեր էին, մնացածը՝ մահմեդականներ: Քանի որ Կյուրինը չընդգրկված էր իսլամական գյուղերով և գտնվում էր խճուղիներից հեռու, հայերի համար դժվար էր ապստամբելը կամ ինքնապաշտպանություն դիմելը:



Կյուրին՝ հայկական թաղ:

Կյուրինցի հայերի Հիմնական արհեստը չալագործությունն էր ու գորգագործությունը: Երբ որևէ պատանի հասունանում էր, մասնագիտության ընտրության մտահոգություն չէր ունենում, տանը հոր՝ դազգահ էր տեղադրում, կնոջ հետ երկու արհեստներից մեկնումեկով զբաղվում: Պատրաստի արտադրանքը վաճառականներին էր հանձնվում:

Մեր ընտանիքը

Մեր տունը՝ Կյուրինի միջով հոսող երկու գետակների միացման տեղում, ժամկոչենց բլուրի՝ մի քանի հարյուր մետր բարձրության վրա էր գտնվում: Թաղը խոսքով էր կոչվում, որ գեղեցիկ այգի է նշանակում: Տան դիմացից, գետակի մյուս ափերով անցնում էր քաղաքի միակ քարապատ ճանապարհը, որտեղով երթնեկում էին Սեբաստիա, դեպի Հյուսիս գնացող կառ-

քերը: Մնացածները նեղ արահետներ էին՝ ոտքով, էշով և ձիով ճամփորդողների համար:

Մեր տունը սարալանջի վրա էր, մեծ չէր, երկու սենյակ, խոհանոցից էր բաղկացած, բայց կահ-կարասի, անկողին, գորգ՝ ամեն ինչ ունեինք: Մեր կալվածքը Սեբաստիա տանող ճանապարհից ձորն էր բաժանում:

Լսել եմ, որ մեծ հորս հայրը՝ Թովոն եկեղեցու ժամկոչ է եղել: Չգիտեմ այդ պատճառով ենք ժամկոչյան դարձել, թե՞ դրանից առաջ էլ ենք նույն կերպ կոչվել: Նա ունեցել է երկու որդի՝ Հակոբն ու Նաչեբը: Հակոբը՝ մեծ հայրս, ամուսնացել է Մարիամի հետ, ում ազգանունը երբեք չեմ լսել: Նրանք բախտավորվել են երեք տղաներով, որոնց կոչել են Մանվել (Մանել), Ստեփան և Հարություն (Արուիթ): Մանվել հորեղբորս կնոջ անունը Աննա էր, նրանք ունեին երկու զավակ՝ Ներսեսն ու Սրբուհին: Ներսեսը տեղահանությունից առաջ թոքախտից է մահացել, Սրբուհին ամուսնացել է Մինասյանի հետ, երեխա չի ունեցել: Ես դեռ փոքր էի, որ Ստեփան հորեղբայրս վախճանվեց, նա ուներ չորս զավակ՝ Մուշեղը, Աղավնին, Զապելը և Տիգրանուհին:

Հայրս՝ Հարությունը, ում Արուիթ էին կոչում, մորս՝ Մելիք Մառուկյանի հետ ամուսնացել է 1895-ի Ջարդերից հետո: Նրանք ունեցել են ութը երեխա, որոնցից չորսը փոքր տարիքում մահացել են: Ես աղոտ միայն մեկին՝ էրմոնիցային եմ հիշում: Ողջ ենք մնացել մենք՝ Մարիամ, Հնազանդ քույրերս, Պողոս եղբայրս և ես: Այդ ժամանակ Կյուրինում բժիշկ չի եղել, մայրերը տանն են ծննդաբերել, չատ հաճախ չնչին պատճառով փոքր երեխաները մահացել են:

Մեր տան կողքին էր հորս հորեղբոր տղայի՝ Կոնիլիոսի տունը, մեր պարտեզները կից էին: Նա երեք տղա և մեկ աղջիկ ուներ՝ Վահանը, Լևոնը, Թովանտան, Պետրոսը: Հավանաբար իմ նախահայրերից մեկնումեկն է գնել այդ հողերը, տներ կառուցել: Մեզ ու հորեղբայրներիս մի կալվածք է բաժին ընկել, որը հավասար բաժանվել է երեք եղբայրների միջև: Կոնիլիոսի հո-

ղակտորը, սակայն, երեք անգամ մեծ էր, քանի որ նա երեք քույր ուներ, որոնց ամուսնացրել էր: Թուրքիայի օրենքով աղջիկը, երբ ընտանիք էր կազմում ու առանձնանում էր, ժառանգություն իրավունք չէր ունենում: Այդ պատճառով էր Կոնիլիոսին այդքան հողատարածք մնացել:

Մայրս ունեցել է մի եղբայր և մի քույր՝ Սարգիսն ու Ճուհարը: Սարգիսը իբրև ճախարակի (Կյուրինի բարբառով՝ ճագար) մասնագետ Այնթապ է գնացել, այնտեղ ամուսնացել, ապրել ու մահացել: Նա ուներ երկու տղա և մեկ աղջիկ՝ Գրիգորը, Սուրենը, Ալիսը: Գրիգորը չգիտեմ ո՞ւր մահացավ: Սուրենը 1946-ին Հայաստան ներգաղթեց, նրա մահանալուց հետո, 1980-ական թվականներին, զավակները՝ Սարգիսը և քույրը իրենց ընտանիքներով հաստատվեցին Կալիֆոռնիայում: Սուրենի քույրը՝ Ալիսը վերջնականապես մնաց Բեյրութում:

Ճուհար մորաքույրս ամուսնացել էր Ճեմճեմյանի հետ, երկու տղա ունեցել՝ Գեղամն ու Մեսրոպը: Այդ տարիներին Թուրքիայում օրենք կար, ըստ որի, եթե երիտասարդը որբուհու հետ էր ամուսնանում, զինվորական ծառայությունից ազատվում էր: Մեսրոպը Տերենտե գյուղում մի անհայր, անմայր աղջիկ էր գտել, ընտանիք կազմել: Չնայած դրան, 1915-ին թուրքերը նրան էլ, եղբորն էլ զորակոչեցին աշխատանքային զորաբանակ, բայց ո՛չ Գեղամը, ոչ Մեսրոպը տուն չվերադարձան:

Մայրս պատմել է, ես էլ եմ հիշում, որ հայրս մեր տան առաջին հարկում ճագարներով չալ գոտի գործելու արհեստանոց, մի քանի աշխատող ուներ: Մանածները ներկում էր հորեղբայրս: 1912-ին հայրս հիվանդացավ, արհեստը չկարողացավ շարունակել, չուկայում մանրավաճառի՝ ուտելիքի, տարբեր ապրանքների խանութ բացեց: Նա մեջքի վրա վերք ուներ, ու քանի որ քաղաքում բժիշկ չկար, հիվանդությունը ոչ ոք չէր հասկանում: Ենթադրաբար, ես հիմա կարծում եմ, որ թերևս չաքարախտ էր, քանի որ քաղցրեղեն՝ հատկապես մեր պարտեզի ծիրանն ու չոր թութը չատ էր սիրում: Հավանաբար հենց այդ



Մեր ընտանիքը՝
մայրս և քույրս
Հորեղբորս
աղջկա՝ Զապե-
լի, ամուսնու՝
Վաղինակ
Գարամանյանի,
Մանել Հորեղ-
բորս աղջկա՝
Սրբուհու և երե-
խաների հետ:

պատճառով էլ մեջքի վերքը չէր բուժվում: Երբ հիվանդությունն ավելի է խորանում, մի ուսուցիչ, ում Պատվելի էին կոչում, անհանգստություն դեպքում նրան դիմում, հայրիկիս խորհուրդ է տալիս ջերմուկ՝ տաք ջրերը գնալ:

Կյուրինի ամենամոտ ջերմուկը գտնվում էր Սեբաստիայի հարավային Ղանդալ² գյուղում: Հայրս խանութը փակում է, ապրանքների մի մասը հետը վերցնելով, որոշում է մինչև Ղանդալ հասնելը գյուղից գյուղ անցնելով ծախել: Մայրս էլ է ուզում նրան միանալ, չի համաձայնվում: Ի վերջո որոշում են, որ ես ընկերակցեմ նրան: Այդ ժամանակ 6-7 տարեկան հագիվ լինեի, դժվար էր հասկանալ ի՞նչս պիտի իրեն օգնեի, թե՞ ինքն ինձ:



Մարիամ քույրս և եղբայրս՝
Պողոսը:

Հայրս ու ես տարբեր ջորիների վրա նստած, ջորեպանների առաջնորդությունը ճամփա ընկանք: Մի քանի ժամ անց, սակայն, ես ձանձրացա ու սկսեցի ճանապարհի հեռավորությունից դժգոհել: Գիշերեցինք բաց դաշտում, ջորեպանները ծղոտ հավաքեցին, կրակ վառեցին ու փլավ եփեցին: Ընթրեցինք, բաց դաշտում էլ քնեցինք: Առավոտյան, երբ ճանապարհը պիտի շարունակեինք, ետ նայեցի, տեսա, որ հայրս չկարողացավ իր ջորին բարձրանալ, ընկավ: Ջորեպաններից մեկը մնաց, որ նրան օգնի, մյուսի հետ մենք շարունակեցինք մեր ճամփան: Բայց ես հանգիստ չէի, անընդհատ հետ էի նայում: Վերջապես նրանք մեզ հասան, ինձ թվաց, թե հայրս լուրջ հիվանդ է: Հաջորդ օրը Մանճըլը կոչվող հայկական գյուղը մտանք, որտեղ ազգականներ ունեինք, «քեռիներ» էինք կոչում, չնայած ես գոնե չգիտեի, բարեկամական ի՞նչ կապ կար մեր ընտանիքների միջև:

Մանճրլըգում հորս վիճակն ավելի ծանրացավ: Նա արդեն չէր կարողանում խոսել, պառկած ինձ էր նայում: Քեռիներ հեռագրեցին հորեղբորս: Երբ նա իր էշով տեղ հասավ, որոչեցին հետ՝ կյուրին փոխադրել: Զորիով տանել հնարավոր չէր, ձիակառք չկար: Քաղաքից զույգ եզներով սայլ բերին, հորս պառկեցրին, ինձ էլ մոտը կապեցին, և մենք ճամփա ընկանք: Հորեղբայրս իր էշով ընկերակցում էր մեզ: Հիշում եմ, սայլը «ճղրճղր» ձայներ էր հանում, որոշ ժամանակ անց ես հորս ձայնը լսեցի՝ նա խոխոտացնում էր: Գիշերը կարծես հանգստացավ, լռեց, ու ես հորեղբորս կանչելով, ասացի.

– Հայրիկը քնեց:

Հորեղբայրս մոտեցավ, նայեց, սայլապանի հետ ինչ-որ բան խոսեց և կարճ արահետով էշը քշեց, գնաց: Հորս դիակն ու ես սայլին կապված շարունակեցինք մեր ճանապարհը մինչև կյուրին՝ Սազին Պողազը կոչվող ձորի մուտքը: Այնտեղ մայրս, մեր ազգականները մեզ էին սպասում: Ինձ սայլից իջեցրին, տուն ուղարկեցին, իսկ հորս մարմինը տարան եկեղեցի: Այդ ժամանակ նա հազիվ 36-40 տարեկան կլիներ: Ես հորս գերեզմանը միայն մեկ անգամ եմ այցելել՝ Զախձորի եկեղեցիից վեր՝ բլուրի վրա էր: Հիշում եմ, որ աղոթում էի:

Մայրս հորս որբերով այրիացավ: Պողոսը դեռ վեց ամսական էր, Հնազանդը՝ 3-4 տարեկան, ես՝ 6-7, Մարիամը՝ 9-10: Մայրս սենյակի մի անկյունում հոր տեղավորեց, սկսեց գոտի ու շալ գործել: Գիշեր-ցերեկ չարչարվում, լալիս էր: Նա շատ եռանդուն կին էր, թե աշխատում, թե տան, տնամերձի գործերն էր հասցնում: Ծաբաթը մի անգամ էլ թոնիրը վառում, հաց էր թխում՝ այնքան համեղ, որ բույրը տարածվում էր փողոցում: Փաստորեն մեր ապրուստը գոյանում էր մորս աշխատանքով, այգու ու արտի բերքով, մեր կովի կաթով: Իհարկե, մենք էլ էինք օգնում նրան, մեծ քույրս՝ Մարիամը ճախարակով թել էր փաթաթում, ես էլ հաճախ մասուրաններն էի լցնում: Այդպես էինք ապրում: Մանվել հորեղբայրս իր հերթին ամեն օր անպայման այցելում



Մայրս, քույրերս՝ և
ես մեր զարմու-
հիների հետ:

էր մեզ, որևէ բանի կարոտ չէր թողնում: Մեր արտը քաղաքից դուրս էր, մշտական խնամք էր պահանջում: Մանվել հորեղբայրս և Ստեփան հորեղբորս տղան՝ Մուշեղը այդ գործով էին զբաղվում: Արտը երկու մասի էր բաժանված, մեկում կովի համար առվույտ էինք ցանում, մյուսում մեզ համար՝ ցորեն:

Մայրս շատ աստվածավախ կին էր, գրել-կարդալ գիտեր, դպրոց էր գնացել: Անընդհատ Սուրբ Գիրքն էր ընթերցում, աղոթում: Նույնը մեզ էր սովորեցրել: Անհնարին էր, որ մենք առանց աղոթելու անկողնուց վեր կենայինք: Աղոթում էինք ամբողջ օրը՝ առավոտյան արթնանալիս, ճաշին, գիշերները անկողին մտնելիս: Բոլոր աղոթքները և շարականները անգիր գիտեինք:

Եկեղեցին և դպրոցը

Մեր քաղաքը 6-7 եկեղեցի ուներ՝ մեկ Ավետարանական, մեկ Կաթողիկե, մնացածը Առաքելական (Լուսավորչական): Մենք Մայր եկեղեցու մոտ էինք բնակվում, Սեբաստիայի «մայրուղու» հանդիպակաց օլրալանջին: Եկեղեցին բավական մեծ և հաստատուն, քարաշեն շինություն էր, հանգչում էր չորս սյուների վրա, երեք խորան ուներ: Գլխավոր խորանի մի կողմում մկրտություն, մյուսում՝ սրբազան իրերի սենյակն էր, որտեղ ասում էին բավական հարստություն կա: 1915-ի տեղահանությանը թուրքերը կողոպտեցին:

Պատմում էին, որ Մայր եկեղեցու և դպրոցի կարիքների համար հայերն ուզել են մոտակա Սաղ թաղից ջուր բերել, բայց կառավարությունը թույլ չի տվել, մինչև չեն խոստացել այդ ջրից մզկիթին էլ բաժին հանել, որպեսզի թուրքերը օրական հինգ անգամ լվացվեն, մաքուր ներկայանան իրենց Ալլահին: Այսպիսով, հայերի դրամով մզկիթը նույնպես, որը Մայր եկեղեցուն բավական մոտ էր, ջուր է ունենում:

Կյուրինի հայությունը ավանդապահ էր, կիրակի օրը բոլորը եկեղեցի էին գնում, և եթե որևէ մեկը այս կամ այն պատճառով բացակայում էր, հանդիպելիս անպայման հարցնում էին.

- Ինչո՞ւ պատարագին չկայիր:

Տոն օրերին հատկապես, ամբողջ քաղաքի հայությունը եկեղեցիներում էր լինում՝ տղամարդիկ զբաղեցնում էին ներքևի, կանայք վերևի հարկը:

Կյուրինցիները տոնում էին հեթանոսական դարերից մնացած Վարդավառը, Համբարձումը, Ծաղկազարդը, ինչպես նաև Զատիկը՝ Քրիստոսի հարությունը: Աստվածածինն, մինչև խաղողը չօրհնվեր, ոչ ոք չէր ուտում: Բարեկենդանի տոնակատարությունը, ձյունների վրա, մի շաբաթ էր տևում՝ երիտասարդները ծառերից օրորոցներ էին կախում, ճոճվում: Յուրաքանչյուր տոն իր առանձին երգերն ուներ:



Կյուրինի Առաջնորդարանը:

Ընդհանրապես Կյուրինի ձմեռը խիստ էր լինում, կենդանիները 3-4 ամիս գտնվում էին մնում: Այդ պատճառով բոլորը նախօրոք պատրաստվում էին: Միսը սովորաբար խանութից էին գնում, բայց ձմեռվա համար ամեն ընտանիք ոչխար էր մորթում, կարմրացնում, լցնում էր հատուկ ամանները, որտեղ նախօրոք հաստ թել էր մտցվում: Երբ միսը սառչում էր, թելով հանում, կախում էին, որ չորանա: Ձմեռը կտոր-կտոր կտրում, կերակուր էին եփում: Իսկ բանջարեղենը՝ կաղամբը, տոնպղինը, գետնախնձորը պարտեզներում փորված փոսերի մեջ էին դասում, վրան հարդ ու հող լցնում: Հետո ձյունը ծածկում ու մինչև գարուն թարմ էր մնում: Կյուրինում պտուղ կամ բանջարեղեն գրեթե չէր վաճառվում, ամեն ոք պարտեզ ու այգի ուներ, իր բերքն ինքն էր հասցնում:

Ձմռանը, սովորաբար, փայտ էինք վառում: Երբ կրակարանում կրակը նստում էր, քուրսի էինք պատրաստում, շուրջը բոլորվում:



Կյուրինի Մայր եկեղեցին՝ 1923-ին մզկիթի վերածված:

Դպրոցը և Առաջնորդարանը եկեղեցուն կից էին: Շենքը նոր էր, կառուցված էր Հին բերդի կողքին, նախնադարյան քարայրներից ցած: Առաջին հարկում խանութներն էին, որոնց վարձով եկեղեցին իր ծախսերն էր հոգում: Քաղաքի տարբեր թաղերում ուրիշ դպրոցներ էլ կային, ընդ որում ամեն թաղ իր եկեղեցին ուներ: Զախձորինը, Շուղուլինը, Եորենինը լուսավորչական էին, Սաղը թաղում կաթողիկե, Ոսս բաղում բողոքական եկեղեցի էլ կար:

Ես Մայր վարժարանն եմ հաճախել, որը ոտքով 15 րոպե էր մեր տնից: Դպրոցը մանկապարտեզ ու վեց դասարան ուներ: Բոլոր դասերը հայերեն էին, բարձր դասարաններում դասավանդում էին նաև ֆրանսերեն ու թուրքերեն: Երբեմն թուրք աշակերտներ էլ էին մեր դպրոցը հաճախում, հայերեն խոսում:

Բացի մի քանի ավագ ուսուցիչներից, դաս էին տալիս չրջանավարտ տղաները: Այդ ժամանակ աղջիկների սովորելն ամոթ

էր համարվում, դրա համար մեծ քույրս՝ Մարիամը դպրոց չգնաց, բայց Հնազանդը, որ փոքր էր, ավելի ուշ սկսեց հաճախել Զախձորի եկեղեցու աղջիկների վարժարանը: Ավելորդ է ասելը, որ տղաների ու աղջիկների դպրոցներն առանձնացված էին:

1915-ին ես ավարտեցի մանկապարտեզը, առաջին դասարան ընդունվեցի: Արդեն բաճկոն էի հագնում, դպրոցից տուն գալուս պես գրպանս պանիր-հաց էի դնում, վազում գնդակ խաղալու: Մեր դպրոցներում գնդակ չկար, գարնանը, երբ կովերի մազը թափվում էր, հետևներից գնում, հավաքում էինք, օճառով կլորացնում, գնդակի նման մի բան դարձնում:

Հիշում եմ՝ մանկապարտեզում կարպետների վրա էինք նստում: Երբ առաջին դասարան ընդունվեցի, առաջին շաբաթում տեղ տվեցին, որի համար ինձ չատ հպարտ էի զգում: Ափսո՛ս, ուրախությունս կարճ տևեց:



Կյուրին տանող ճանապարհը:

Զերբակալությունները

1915-ին Կյուրինի Մայր եկեղեցու հոգևոր հովիվը Սուրեն վարդապետ Քեմաճյանն էր: Վերջին անգամ պատարագ մատուցելուց հետո նա խնդրում է, որ տղամարդիկ մնան, կանայք, երեխաները տուն գնան: Ու պարզում է իրավիճակը, նախազգուշացնում է, որ հայերի զենքերը հավաքելու են:

- Մի՛ հանձնեք,- թելադրում է հայր սուրբը,- եթե չհանձնեք, հավանաբար մի մասս կփրկվենք:

Ծառերը, սակայն, չեն համաձայնվում:

- Թուրքի դեմ կռվել, հակառակվելն անհնար է,- ասում են ու հաջորդ օրն իսկ կամավոր հանձնում են զենքերը:

Իսկ հոգևոր հորը ոստիկանները կառք են նստեցնում, տանում Սերաստիա: Իբրև նահանգապետը կարևոր գործով կանչում է: Հաջորդ օրը կառքը դատարկ հետ է դառնում, վարդապետի անձնական զարդեղենները հայտնվում են չուկայում, վաճառքի են հանվում:

Ապրիլին սկսվեցին զանգվածային ձերբակալությունները: Թուրք ոստիկանները հայ հեղափոխականների ցանկն արդեն ունեին, մի գիշերում 74 կուսակցականի բանտարկեցին: Ասում էին նրանք ամեն չարչարանքի դիմացել, ոչինչ չեն խոստովանել: Կանայք պատմում էին, որ երբ բանտարկյալների հագուստները լվանալու համար տուն էին բերում, ամբողջովին արյունոտ էին լինում:



Կյուրինցի
կամավորականը
Հայկական լեգեոնում:

Հունիսին կառավարութիւնը «ընդհանուր զորակոչ» Հայ-տարարեց 15-55 տարեկան տղամարդկանց՝ համար: Նրանց նախ բանտ էին տարել, հետո, երբ տեղ չէր մնացել, լցրել էին եկեղեցիները:

Հարյուրավոր ուրիշ Հայերի հետ մեր գերդաստանից ձերբակալեցին Մանուել Հորեղբայրս, Ստեփան Հորեղբորս տղան՝ Մուշեղը, Կոնսելիոսն ու իր երկու զավակները՝ Վահանը, Լևոնը, ինչպես նաև մորաքրոջս երկու որդիները՝ Գեղամ և Մեսրոպ ձեմձեմյանները: Զինվոր-ոստիկանները ամեն օր 30-40 Հայ բանտարկյալների իրար կապկպած քաղաքից դուրս են հանում, ասում, թե ռազմաճակատ են տանում: Երբ Հայ տղամարդիկ առարկում են թե՛ «Մենք զինվոր ենք, փախստական չենք, ինչո՞ւ եք կապկպում», թուրք ոստիկանները պատասխանում են.

- Կառավարական հրահանգ է:



Կյուրինցի
կամավորականը
Կովկասյան ճակատում:

Ես ամեն օր գնում էի մեր տան դիմաց՝ գետակի մյուս ափին գտնվող թուրքական գերեզմանատունը, որը Հայերը «կորե-լիք» էին կոչում, տապանաքարերի հետևը թաքնվում, նայում էի, թե զինվոր-ոստիկանները ո՞ւմ են տանում մեր տղամարդկանցից, որ լուր բերեմ տուն: Մի օր էլ տեսա Մանուել Հորեղբորս և Ստեփան Հորեղբորս տղային՝ Մուշեղին, որ 20 տարեկան հազիվ լինեք: Նրանք ուրիշ երկու հոգու հետ էին կապված, չորս-չորս խմբերով գնում էին: Իսկույն ոտքի ելա տապանաքարի ետևից, մերոնք նայեցին ինձ, ես իրենց ու լաց եղանք: Երբեք չեմ մոռանա Հորեղբորս հուզված Հայացքը: Մեր գերդաստանից յոթ տղամարդ ձերբակալվեց, ոչ մեկը չվերադարձավ:

Այդպես Կյուրինի բոլոր Հայ տղամարդկանց կապկպած տա-րան ու սպանեցին³: Գոնե ես, իմ ազգականներից կամ ծանոթ-ներից որևէ մեկին չեմ տեսել, ողջ լինելը չեմ լսել:

Կոնսելիոսը Կյուրինի Մայր եկեղեցու լուսարարն էր: Երբ նրան հարյուրավոր ուրիշ հայերի հետ բանտարկեցին եկեղեցում, իրեն հայտնի գաղտնի ճանապարհով փախավ, մեր տունը եկավ: Քանի որ հայրս մահացած էր, մեր տանը չափահաս տղամարդ չկար, կասկածից զերծ, ապահով էինք: Կոնսելիոսը մինչև տեղահանությունը ապաստանեց մեր տանը: Բռնագաղթից մի օր առաջ, նա էշի վրա մի քանի իր կապկպեց, աներձագի տունը գնաց, որ հետները գաղթի: Թուրք ջորեպանները, սակայն, տեսել, մատնել էին: Ոստիկանները Կոնսելիոսին բռնեցին, տարան, սպանեցին:

Մի քանի ուրիշ երիտասարդներ էլ բանտից փախչում, մեր հարևանի՝ Ղապախենց տանն են թաքնվում: Նրանք ծխնելույզից մի խոշոր անցք էին բացել, պարտեզ տանող խրամատ փորել, հողը դատարկել, ստորգետնյա ապաստարան էին ստեղծել, մեջը մտել: Քանի որ պարտեզի պատը անտաշ քարերով էր շարված, կարողացել էին չնչել: Երբ հարազատները տեղահանվում են, թաքնվողները որոշում են գիշերը լեռ բարձրանալ, ճանապարհին նրանց միանալ: Բայց ամբողջ աքսորի ընթացքում ոչ մեկը չհայտնվեց: Երևի բռնել, սպանել էին:

Գաղթը

Հունիս ամսին էր, մունետիկները թաղից թաղ անցնելով հրահանգեցին.

- Ամեն տուն նշանակված օրը գաղթելու պատրաստ լինի:

Պատվիրեցին նաև ընտանի կենդանիներ չվերցնել, թեթև իրերը ընտրել: Բոլոր տների բանալիները պիտի հանձնվեին կառավարությունը: Տեղահանությունը սկսելու էր քաղաքի երկու ծայրերից, մեր տունը գրեթե կենտրոնում էր: Ամբողջ Կյուրինում էլ ու ջորի չէր մնացել, մենք հազիվ կարողացանք մի ավանակ գնել, որ չորս անչափահաս երեխաներիս, անհրաժեշտ իրերը, անկողինները փոխադրի: Մայրս որոշեց փոքր քրոջս ու



Կյուրինցի գաղթականները Հալեպում:

եղբորս՝ Հնազանդին, Պողոսին, հորեղբորս կնոջ՝ Մարիամի մոտ թողնել, որպեսզի նա ասի «Հինգ զավակ ունեմ» և մի էշ ևս ձեռք բերել կարողանա: Հաջորդ օրը մենք ճամփա ընկանք առանց Հնազանդի և Պողոսի: Ամենից դժվարը մեր տնից ու կովից բաժանվելու պահն էր: Բոլորս էլ լաց էինք լինում: Մայրս հարևան թուրքին թողեց մեր կովը, ասաց.

- Եթե ծախեմ էլ, այդ դրամով գնվածը չեմ կարողանալու ուտել, երեխաներիս կերցնել:

Կովը մեզ համար ընտանիքի անդամ էր համարվում:

- Որ վերադառնանք,- մի պահ լռելուց հետո ավելացրեց մայրս,- ետ կվերցնենք, այլապես թող ձեզ մնա:

Թուրքը պատասխանեց.

- Քույրս, լաց մի լինի, լվա երեսդ դուան առջևից հոսող ջրով, թերևս այսպիսի ջուր ուրիշ տեղ չգտնես:

Արցունքներով հեռացանք մեր տնից:

Զգիտեմ քանի ժամ քայլեցինք, մինչև Ղավախ կոչվող գյուղը հասանք: Հենց դաշտում էլ գիշերեցինք: Մեր ունեցած էշը քուռակ էր ծնել, առաջին օրը տանելու դժվարություն ունեցանք: Հաջորդ առավոտ էշը բեռցրինք, քուռակը թողեցինք: Խեղճ մոր աչքը հետևում մնաց, բայց չարունակեց քայլել:

Կարծեմ հինգ օրից Ալպիստան հասանք: Միայն մեկ օր պիտի մնայինք: Առավոտյան մայրս ոստիկանից մի քանի օր ևս մնալու թույլտվություն խնդրեց, որպեսզի հորեղբորս կինը գա, հասնի, քույրս, եղբայրս միանան մեզ: Անծանոթ մեկին դրամ տվեցինք, մեզ ձիահան գետի ափը, իր տունը տարավ, հարդանոցում պահեց: Ամեն օր սպասում էինք հաջորդ քարավանին: Վերջապես 4-5 օր հետո քույրս և եղբայրս եկան, մեզ գտան:

Թերևս նախախնամություն չնորհիվ էր, որ նրանք ուշացան, մենք վերջին քարավանին միացանք, Արաբական անապատները, Տեր Զոր չհասանք:

Մի քանի օր Ալպիստանում մնալուց հետո մեր քարավանը ուղղվեց Մարաշ: Կանոնավոր ճանապարհներ չկային, քարքարոտ ու ժայռոտ կածաններով էինք առաջանում: Երեք օր այդպես տանջվելուց հետո Այրան բունար՝ թուրքերեն թանի աղբյուր կոչվող ձորը հասանք: Հազիվ էինք բեռները քանդել, ասացին, որ հետ պիտի դառնանք: Բեռները նորից կապկպեցինք, նույն ճանապարհով վերադարձանք: Մոտ մեկ ժամ անց զինվոր-ոստիկանները դադար տվեցին: Այդտեղ տեսանք, որ կյուրինցի թուրք ջորեպանները, որոնք մեր հարուստ համաքաղաքացիների իրերն էին փոխադրում, ջորիները բեռներով լիքը տուն էին վերադառնում: Բեռները կային, տերերը՝ ոչ...

Նոր էինք հանգստի պատրաստվել, հեռվում հրացաններով, կացիններով, փայտերով, դանակներով զինված ամբոխ նկատեցինք: Երբ մոտեցան, կենդանիները, բեռները թողեցինք, փախանք: Դեռատի, մի ոտանի մի աղջիկ անթացուպը դեպի խուժանը ուղղեց, «Թխկ, Թխկ, Թխկ»՝ կրակելու ձայներ հանեց:

- Եթե զենք ունենար, ի՞նչ կաներ արդյոք, - անցավ մտքովս:

Մտածելու ժամանակը չէր, ամեն մարդ թաքնվելու տեղ էր փնտրում: Մենք մի փոս մտանք, ամբողջ գիշեր դուրս չեկանք: Բարեբախտաբար փոքրիկները քնեցին, դժվար էր մեծերի վիճակը:

Առավոտյան, հենց լույսը բացվեց, տեսանք, որ ոչ մի բեռնակիր անասուն, իր չի մնացել: Թալանողները, սակայն, դեռ չէին հեռացել, նրանք նկատեցին մեզ ու սկսեցին հանել մեր վրայի տանելի հագուստները, ինչ որ գտան, խլեցին: Մի թուրք ատրճանակը մորս կրծքին սեղմեց՝ «Դրամներդ» գոռաց: Մեր քարավանը լրիվ կողոպտելուց հետո միայն նրանք հեռացան: Մենք հազիվ կարողացանք փրկել մի քանի ոսկեդրամ, որ մայրս նեղ օրվա համար կարել էր մեր խոնացած ներքնաշապիկների թևերի տակ:

Հին ժամանակ հայկական ընտանիքներում երեխաների ծննդյան թվականները արձանագրում էին Ավետարանի վերջի դատարկ էջերին: Ավանդույթ, որը շարունակվում էր սերնդեսերունդ: Մենք էլ Ավետարան ունեինք, բայց կողոպտված իրերի հետ տարան, հույսներս մեր հիշողության վրա մնաց:

Այն ոստիկանը, որն իբր մեր քարավանը պիտի պաշտպաներ, իհարկե, թուրք խուժանից ստացավ իր բաժինը: Մեզ նորից ստիպեցին հետ՝ Ալպիստան դառնալ: Դարձանք: Եղան այնպիսիները, որոնք երեք օրվա ճանապարհը մեկ օրում անցան, Ալպիստան հասան: Նրանց հետ էին մեր հարևաններն ու Մարիամ քույրս: Իսկ մենք, ինչպես գաղթականների մեծ մասը, հենց մի գյուղի մոտեցանք, դաշտում հոգնած ընկանք: Երբ ոտքի ելանք, որ շարունակենք ճանապարհը, տեսանք հիվանդները, անկարները պառկած մնացել են: Մենք ի վիճակի չէինք նրանց օգնել, ինքներս էլ կողոպտվելուց հետո վայրի բույսերով էինք սնվում: Ճարահատ գյուղ մտանք, գյուղապետին նկարագրեցինք մեր վիճակը: Նա սկսեց հայհոյել կառավարությունը՝ «Հայերն էլ են Աստծո ստեղծածները» ասաց, և մարդիկ ուղարկեց, որ դաշտում մնացածներին գյուղ բերեն:

Հաջորդ առավոտյան նորից ճանապարհ ընկանք, դժվարությամբ Ալպիստան հասանք, որտեղ մնացինք մի քանի շաբաթ: Ալպիստանի հայերն արդեն բռնագաղթել էին: Քաղաքի միջով հոսում էր ձիհան գետը, որը երկու հյուղ ուներ: Գոմեշներն ամբողջ օրը պառկում էին գետի ջրերի մեջ, առատ կաթ տալիս: Վրա հասավ իսլամների Ռամազան տոնը, մեզ բավականաչափ ուտելիք բաժանեցին: Ալպիստանը հարուստ էր մրգերով ու բանջարեղենով, մենք մեր պահած ոսկեգրամները քիչ-քիչ հանում, ծախսում էինք:

Թուրք ոստիկանները, սակայն, մեր քարավանը նորից քեցին դեպի Մարաշ: Դեռևս այն հովիտը չհասած, որտեղ մեզ կողոպտել էին, լուր տարածվեց, որ չեթենները նույն վայրերում թափառում, պատահած հային սպանում են: Ետ՝ Ալպիստան դարձանք, ու արդեն չեմ հիշում, թե որքա՞ն մնացինք: Շուտով մեզ երրորդ անգամ տեղահանեցին ու երկու օր քայլեցնելուց հետո, հետ դարձրին: Կարծես ուզում էին հոգնեցնել, որ ճանապարհին ընկնենք, մնանք: Մեր ընտանիքը, ճիշտ է, տեղաշարժերից կորուստներ չունեցավ, բայց բավական դժվար եղավ Հնազանդի, Պողոսի հետ անընդհատ տեղից-տեղ գաղթելը: Հնազանդը, որքան էլ փոքր լիներ, կարողանում էր մի կերպ քայլել, սակայն Պողոսին, որը հազիվ երկուս ու կես տարեկան էր, միշտ պետք էր չալակել:

Ալպիստան որոշ ժամանակ մնալուց հետո մեզ Զեյթուն ուղարկեցին: Քայլում էինք քարքարոտ լեռներով, որտեղ արահետ անգամ չկար: Սարսափելի ցուրտ էր, հովիվները, որպեսզի քնած ժամանակ չսառչենք, մեր վրա մաղից հյուսված լայն ծածկոցներ փոխեցին: Գաղթականների մի մասն էլ ոչխարների փաթախներում ապաստանեց: Այդ տաժանելի ճամփաներով մինչև Զեյթուն հասանք մոտ մեկ շաբաթ տևեց: Զեյթունի լեռնային այգիներում խաղողը հասել էր, քիչումիչ կերանք, մինչև ոստիկանները մեզ հաց բաժանեցին: Քաղաքը ամայի էր, հրդեհված եկեղեցիներ դեռ մխում էր: Գիշերը ինչ որ իջևանատան առջև լու-

սացրինք, առավոտյան մեր ճանապարհը շարունակեցինք դեպի Մարաշ:

Քայլի, որ հասնես, ո՞վ գիտե քանի գիշեր ճանապարհներին անցկացրինք: Հիշում եմ՝ մի լեռ անցանք, որը Ադր թաշ՝ Ծանր քար էր կոչվում: Դրանից հետո Մարաշ մտանք: Մեզ դարձյալ իջևանատանն ու շրջակայքում տեղավորեցին: Մարաշում դեռ բավական հայեր կային, նրանք ամբողջ գիշեր, մինչև լույսը բացվելը մեզնով զբաղվեցին: Գրեթե բոլոր գաղթականները արևից ու փոշուց աչքի հիվանդություն էին ձեռք բերել: Մարաշի հայերը նրանց աչքերին դեղ քսեցին, կարիք ունեցողներին հազուստ բաժանեցին:

Առավոտյան էլ, երբ ճանապարհ էինք ընկնում, մեզ համար էլեր, ջորիներ, տաք անկողիններ բերեցին, բայց ոստիկանները թույլ չտվեցին, որ հետներս նոր բեռ վերցնենք, բռնությամբ մի կողմ չալրտեցին: Մարաշից Այնթապ տանող ճանապարհին, այն գետի ափին, որտեղ գիշերեցինք, մեզ ուղեկցող զինվոր-ոստիկանները իրենց շատ սանձարձակ, լպիրշ էին պահում հայ կանանց ու աղջիկների հանդեպ:

Այնթապում նույնպես, բավական հայեր մնացել էին, նրանք էլ էին ջանում մեզ օգտակար լինել: Ես, ինձ հասակակից գաղթական երեխաները աշխատում էինք զինվոր-ոստիկաններից գաղտնի քաղաք փախչել, հաց մուրալ: Իմ մի քանի փորձերը հաջողությամբ ավարտվեցին, սակայն երբ բռնվեցի, թե՛ ծեծ կերա և թե այդ օրվա հավաքած պաշարս կորցրի:

Մեզ տեղավորել էին Այնթապի բլրեջի ետևի՝ հայերին պատկանող տներում: Թաղը Պաղ Էվլերի՝ Այգիների տներ էր կոչվում: Տասնհինգ օր մնացինք և այդ ընթացքում այն գաղթական ընտանիքներին, որտեղ չափահաս տղաներ, ծերունիներ կային, զինվոր-ոստիկաններն առանձնացրին, չգիտեմ ո՞ւր ուղարկեցին: Զինադադարից հետո, մինչև հիմա, նրանցից ոչ մեկին չեմ հանդիպել: Իմ մազերն արդեն երկարել էին, մերոնք ինձ աղջկա հագուստ հագցրին, այդ ձևով փրկվեցի:

Քրդական գյուղն ու բռնի կրոնափոխությունը

Վերջապես մեզ՝ Այնթապում մնացածներին, քարավանով մոտակա Առը կոչվող վայրը հասցրին և 40-50 հոգիանոց խմբերի բաժանելով, ցրեցին: Մենք մեր ընտանիքով ու ազգականներով արդեն մոտ 40 հոգի էինք, մեզ քրդական Չանախչի գյուղը տարան: Մեր խմբի առաջնորդը Կյուրինից մինչև Այնթապ ու Չանախչի հորեղբորս կինը՝ Մարիամն էր, որը Անթիքաճյանների գերդաստանից էր, բարձրահասակ էր ու կորովի: Տարագրության ճանապարհին գաղթականները Մարիամ չավուչ՝ ոստիկան Մարիամ անունը տվին նրան, քանի որ բոլոր բողոքները, կարգադրությունները իր միջոցով էին կատարվում:

Երբ Չանախչի հասանք, ուշ երեկո էր: Գյուղացիները մեզ էին սպասում: Զառիվերի մոտ դիմավորեցին, և ամեն մեկը սկսեց երիտասարդ աղջիկ, տղա ընտրել, որ որպես սպասավոր կամ մշակ տուն տանի: Հիմնականում մեծահարուստներն էին հայ վերցնում:

Մի մարդ էլ իմ թեր բռնեց: Ես փախա, բայց հորեղբորս կինը ասաց, որ չվախենամ, գնամ: Մեծ քրոջս, հորեղբորս աղջկան ուրիշները՝ տարբեր մարդիկ տարան:

Արդեն աշուն էր, հունիսից ոչ լողացել էինք, ոչ մազ կտրել, ոչ էլ հագուստ փոխել: Հոգնած էինք ու կեղտոտ:

Առաջին գիշերն ինձ ախոռում պառկեցրին: Հաջորդ առավոտ մեկը եկավ, որ ածելիով գլուխս սափրի, չթողեցի: Գնացին, ձեռքով աշխատող մեքենա բերեցին, մազերս խուզեցին: Հետո գետափ տարան, լողացրին, հին-մին շորեր հագցրին, եղա քրդի լամուկ: Բայց աստիճանաբար վարժվեցի, հենց մազերս երկարում էին, ձայն չէի հանում, թույլ էի տալիս, որ ածիլեն:

Հայ գաղթականներից նրանց, ովքեր ընդունակ էին աշխատելու, տներում տեղ տվեցին, մնացածներին ախոռները տրամադրեցին, որ մաքրեն, ապրեն: Մեծ քրոջս տները մորս, Հնա-

զանդին ու Պողոսին գոմում անկյուն հատկացրեց: Հունձքն սկսվել էր, մայրս դաշտերում մնացած ցորենը հավաքում, ձմեռվա պաշար էր պատրաստում:

Չանախչին բարձունքի վրա էր: Գյուղից մոտ 200-300 մետր ցած գետ էր հոսում, որի երկու ափերին արտեր կային, քրդերն ամեն ինչ ցանում էին: Իսկ լեռները պատած էին պիստակի ծառերով: Աչնանը գյուղացիները պիստակը հավաքում, չորացնում, հասցնում էին քաղաք, վաճառում: Հիշում էին, որ պատերազմից առաջ հայ վաճառականները գալիս էին, պարտքով դրամ տալիս, փոխարենը աչնանը պիստակ տանում:

Հազիվ էինք փոքր ինչ ուշքի եկել, ասացին, որ պետք է իսլամանաք, այլապես կաքսորվենք արաբական անապատները: Այդ առաջարկը մեր վրա չատ ծանր ազդեց: Մեծերը երկար խորհրդակցեցին, և հորեղբորս կինը՝ Մարիամը որոշեց, որ կրոնափոխ լինենք: Երբ մոլլան եկավ, որ տղաներին թլփատի, ես լեռը փախա, փրկվեցի: Ի վերջո մեզ մզկիթ տարան, Ղուրանը բերին, որ հերթով ձեռքներս դնենք վրան, կրկնենք. «Լա իլահ իլլահ, Մուհամետ ռասուլ Ալլահ» («Աստված մեկ է, Մուհամմեդը նրա առաքյալը»): Հենց հորեղբորս փոքր աղջկա՝ Տիգրանուհու հերթը հասավ, նա, փոխանակ ձեռքը Ղուրանին դնելու, խփեց, մոլլայի ձեռքից զցեց: Զայրացած մոլլան այնպիսի ապտակ հասցրեց, որ Տիգրանուհիի մայրը աղջկան սաստեց, հորդորեց հնազանդվել:

Արարողությունը շարունակվեց, մենք մահմեդականացանք, և տոմարում գրվեց, որ բոլորս իսլամ ենք, գյուղում այլևս հայ չկա: Սակայն, երբ մենք տուն վերադարձանք, դարձյալ մեր աղոթքներն աղոթեցինք, «Հայր մեր»-ով անկողին մտանք:

Մեր անուններն էլ փոխեցին, իմը Իբրահիմ Նալիլ դրեցին, Զապելը դարձավ Զեյնաբ, Աղավնին՝ Այլէ: Մայրիկինս Մելիք մնաց, քանի որ իրենք էլ ունեին այդ անունը: Նույնը քրոջինս՝ Մարիամինը: Մի խոսքով բոլորին մի-մի անուն կպցրին, տոմարում արձանագրեցին: Իրենք՝ մահմեդականներն էլ չէին հավա-


տում մեր կրոնափոխությունը, ով ինչ անուն որ ուներ, այդպես էլ կոչվում էր:

1915-ի ձմռանն էր, թե՞ 1916-ին, ժանտատենդ (տիֆ) փոխանցիկ հիվանդությունը տարածվեց: Մենք՝ հայերս չափազանց հոգնած էինք ու տկարացած, չատ չուտ վարակվեցինք: Ծաբաթ էր անցնում, որ մի քանի հոգի չմահանար: Մեր հարազատներից կարճ ժամանակում կորցրինք հորեղբորս կնոջը՝ կորովի Մարիամին, փոքր աղջկան, մյուս հորեղբորս կնոջը՝ Աննային, մորաքրոջս, ուրիշներին: Նույնիսկ թաղելու հնարավորություն չկար: Առողջ կանայք հազիվ փոքր փոսեր էին փորում, հանգուցյալին տեղավորում, վրան մի քիչ հող լցնում: Մորաքրոջս հուղարկավորելուց հետո, հաջորդ օրը, երբ չիրմին այցելության գնացինք, տեսանք զազանները դիակը հանել, հոշոտել են՝ միայն մազերն ու ոսկորներն էին մնացել ցիրուցան: Ժանտատենդով ես էլ վարակվեցի, քուրդը, որն իր տանն ինձ տեղ էր տվել, տարավ, մորս հանձնեց: Բավական երկար ժամանակ առանց դեղի ու անունդի պառկած մնացի, բայց ջահել էի, տոկացի ու առողջացա:

Ուտքի ելնելուց հետո մի ուրիշ ընտանիք ինձ վերցրեց: Մայր ու աղջիկ էին՝ մայրը պառավ կին էր, աղջիկը՝ երիտասարդ այրի: Բավական կալվածներ ունեին, որոնք աշխատող ձեռքի կարիք էին զգում: Առավոտյան, արևածագին արտ կամ այգի էինք գնում, ուշ երեկոյան վերադառնում: Միշտ աղոթում էի, որ անձրև գա, տանը մնանք, գնամ մզկիթի բակը, խաղամ: Ամառային մի գիշեր էլ, արտում, պառկել էի ծառի տակ, քունս էր տանում՝ սկսեցի թուրքերեն, հայերեն հին-հին երգեր երգել: Քուրդ հարևանուհին եկավ, հարցրեց, թե ինչո՞ւ չեմ քնում, ինձ մխիթարեց:

- Այս դժվարությունները կանցնեն, դու նորից քո տունը կգնաս:

Մի անգամ էլ տանտիրուհին տղամարդու արժանապատվությունս վիրավորեց: Ես աշխատում էի այգում, իսկ ինքը ձո-



«Այստեղից անցել է թուրքը»՝ կյուրինը ավերակ:

րում ջուր էր տաքացրել, լողանում էր: Ձայն տվեց: Ամաչելով մոտեցա, խնդրեց:

- Մեջքս օձառիր, չփիր:

Չուզելով արեցի: Ինքն էլ զգաց սխալը, ուրիշ անգամ չկանչեց:

Նա Եփրատի ափի գյուղերում ազգականներ ուներ: Առաջին անգամ դստեր հետ գնացի վերին Չարդախ կոչվող գյուղը: Աղջիկը հեռվից ցույց տվեց Հոռմկլան, ասաց:

- Դատարկ է, հայ չի մնացել...

Մինչդեռ ժամանակին բերդաքաղաք, կաթողիկոսական աթոռանիստ էր եղել: Դրանից հետո մի քանի անգամ մենակ եմ գնացել Չարդախ: Ասում էին էլը ճամփան գիտի, կտանի: Աչնանն էլ մի անձանոթ քրդի հետ Նիզիպ քաղաքը ուղարկեցին, ոչխար տարանք ծախելու: Ճանապարհը դարձյալ Եփրատի ափով էր անցնում, գետը մոտիկից տեսա: Երբ ոչխարները ծախեցինք, քուրդն ինձ շատ համեղ խորոված հյուրասիրեց, որ

Հոգնությունս անցնի: Ձանախչիում որոշ ժամանակ էլ գլխիս ձախ կողմը ուռեց: Իմացանք, որ մոտ մեկ ժամ հեռավորություն վրա բժիշկ կա: Մորս հետ գնացինք, գտանք: Քննեց, ասաց.

- Ես բժիշկ չեմ, խոտերով ու բույսերով եմ հիվանդներին բուժել փորձում: Երեխայի վիճակը լուրջ է, պետք է անպայման Այնթապ տանք:

Մտահոգ հետ էինք դառնում, ճանապարհին հանդիպեցինք հարևան գյուղի մեր ծանոթներին, որոնք Նիդիպից էին գալիս: Հետները մի ծերունի կար, հուշեց.

- Այս հիվանդությունը «Փիրուզ» է կոչվում, ձեր գյուղում մի ընտանիք կա, կարողանում է բուժել:

Վերադարձանք Ձանախչի, մտանք այդ տունը: Քսան տարեկան մի աղջիկ՝ «բու, բու, բու, բու» աղոթեց, խոտերից պատրաստված խյուս դրեց վերքիս: Որոշ ժամանակ անց, գլխիս վրա անցք բացվեց, օրերով թարախ հոսեց: Մինչև հիմա ձախ ականջս տկար է, երբեմն դեղնավուն հեղուկ է արտադրում:

Մեր մայրերն ու մեծերը մտահոգ էին հատկապես աղջիկների ապագայով, վտանգավոր էին համարում նրանց՝ գյուղում մնալը: Որոշեցին հայաշատ վայր փոխադրվել: Երկար մտածեցին, հնարքի դիմեցին:

- Այնթապում հայերին դրամ են բաժանում, - ասացին, - գնանք մեր բաժինն ստանանք, գանք:

Գյուղացիները գրավ պահանջեցին, որ անպայման հետ դառնանք: Մայրս, ճարահատ, փոքր քրոջս, եղբորս հետ պատանդ մնաց: Քրդերը համոզվեցին, թույլ տվեցին ճամփա ընկնել:

Տարբեր տներում ծառայող մոտ 15 հայ պատանի էինք, առավոտ վաղ դուրս եկանք գյուղից: Գիտեինք, որ արագ քայլելու դեպքում մինչև Այնթապ ինը ժամվա ճանապարհ է: Մի երիտասարդ քուրդ ընկերանում էր մեզ, որ տաներ, հետ բերեր: Ուշ երեկոյան քաղաք հասանք: Նախապես լսել էինք, որ մի ձեռնարկություն կանանց բուրդ խուզելու և մանելու աշխատանք է

տալիս: Գնացինք, գտանք: Համազգեստով դռնապանը մեզ ներս տարավ, իսկ ուղեկցող քուրդը գնաց, որ հաջորդ օրը գա, հետ՝ գյուղ տանի: Աշխատասրահ մտանք, զարմացանք՝ բոլորը հայ էին: Հաջորդ առավոտյան, երբ քուրդը եկավ, հայ դռնապանը մեզ նրան չհանձնեց, ընդհակառակը, վրան բարկացավ.

- Ինչո՞ւ չեք թողել, որ բոլորը գան, եթե անմիջապես աղատ չարձակեք, ձեր գյուղը զինվորներ կուղարկենք:

Ես, ինչպես նախօրոք պայմանավորվել էինք, հետևյալ բովանդակությամբ երկտող գրեցի մորս՝ «Մեզ այստեղ բանտարկել են, անհնարին է հետ դառնալը» և քրդին տվեցի, որ տանի, տեղ հասցնի: Երբ մայրս կարդում է երկտողը, սկսում է ողբալ, որ զավակներից զրկվել է...

Մեզ ուղեկցած քուրդը փոխանցում է համազգեստով հայի խոսքերը, ու քրդերը վախենում, Այնթապ ճանապարհորդող մեկի հետ թույլ են տալիս, որ մայրս, եղբայրս, փոքր քույրս գան, մեզ միանան:

Այնթապում հայկական միջավայր կար: Ես աշխատանքի անցա հյուսվածքեղենի թուրքական մի մեծ ձեռնարկությունում, որտեղ վճարումը գոհացուցիչ էր: Հսկիչը հայ կին էր, ինձ լավ էր վերաբերվում: Արհեստին, վաղուց արդեն, բավական ծանոթ էի:

Այնթապի կտուրներին խոտ էր աճում: Իմ աշխատած տեղը մի գառնուկ կար, որին թողնում էին, որ բարձրանա, արածի: Մինչև իսկ հարևան տան կտուրին միացնող տախտակ էին հարմարեցրել, որ մեկից մյուսն անցնի: Մի օր ինձ խնդրեցին, որ տախտակը հետ քաշեմ: Բարձրացա կտուր, չարժեցի, բայց քանի որ ծանր էր, չկարողացա հավասարակշռությունս պահել, երկրորդ հարկից տախտակի հետ ցած ընկա: Ուշքս գնացել է, չգիտեմ որքա՞ն ժամանակ անց սկսել եմ ձայներ հանել: Հարևանները լսել, հավաքվել, գործատեղս իմաց են արել: Աչքերս բացեցի անկողնիս մեջ, մեջքիս ոսկորը դուրս էր ընկել: Մասնագետի մոտ տարան, տեղը զցեց, մի քանի օրից ոտքի ելա:

Բրդի գործարանը, ուր աշխատում էին մայրս, քույրս, Հորեղ-
բորս աղջիկները փակվեց: Դժվար էր ուրիշ գործ գտնելը: Ջա-
նախչիի մեր ծանոթները, երբ Այնթապ էին գալիս, անպայման
այցելում էին մեզ: Խորհուրդ տվեցին հետ՝ գյուղ վերադառնալ:
Այդպես էլ արեցինք, ու բացի ինձնից, մերոնք բոլորն իրենց
նախկին աշխատանքին անցան:

Ինձ մի ուրիշ քուրդ ընտանիք՝ դավակ չունեցող այր ու կին
վերցրին: Ամուսնու անունը Համո էր, ափո Համո՝ Համո Հորեղ-
բայր էի ասում: Մի օր ես, Հնազանդը, Պողոսը՝ երեքով, գետի
մյուս ափը փայտ հավաքելու էինք գնացել: Տեղատարափ ան-
ձրև սկսվեց: Ուղեցիկնք տուն վերադառնալ, տեսանք գետը Հոր-
դել է, հնարավոր չէ անցնել: Ափո Համոն եկել, դիմացի ափին
կանգնել, մեզ էր նայում: Ի վերջո դժվարությամբ մեր կողմը
անցավ, մեկիս գրկեց, մյուսի ձեռքից բռնեց, գետը մտանք: Հո-
սանքը, սակայն, չատ ուժեղ էր, չորսիս էլ քշում էր: Գետի մյուս
կողմից գյուղացիներն սկսեցին գոռգոռալ:

- Երեխաներին թող, դու քեզ աղատի:

Թեև Հորձանքը մոտ 200 մետր քշել էր, ափո Համոն մեզ
չլքեց, ապահով ափ հանեց: Գետի այդ օրվա այդպես Հորդելն
անսպասելի էր, ամառները մանավանդ ծանծաղ էր լինում,
միշտ բորիկ էինք անցնում: Արդեն կոշիկ չունեինք, ամբողջ օրն
այնքան էինք քայլում, որ ոտքներիս տակի մաշկը հաստանում
էր: Ձմեռներն էլ մի կտոր կաշի էինք ճարում, տրեխի նման բան
պատրաստում: Ձանախչիում մնացինք մինչև զինադադարը:
Երբ լսեցինք, որ պատերազմն ավարտվել է, անգլիացիներ են
եկել Այնթապ, մայրս մի ճամփորդի հետ ինձ քաղաք ուղարկեց,
որպեսզի թարմ լուրեր բերեմ: Ճամփորդը քայլում էր, ես վա-
զում էի: Երբեմն, երբ նստում էր ծխելու, ինձ թույլ չէր տալիս:

- Մնկաչոք հանգստացիր,- ասում էր,- եթե մկաններդ
բռնվեն, ի՞նչ պիտի անեմ:

Այդպես հասանք Այնթապ: Քաղաքը փոխված էր, անգլիացի
զինվորների ներկայությամբ հայերի կյանքը ապահով, հան-

գիստ էր դարձրել: Նույնիսկ ազգային մի կազմակերպություն
էր ստեղծվել, որը քրդական գյուղերի հայերին հավաքում էր:
Այդ կազմակերպության պաշտոնյան ինձ խորհուրդ տվեց.

- Գնացեք Նիդիպ քաղաքը (մեր գյուղից ժամ ու կես էր հե-
ռու), այնտեղ հատուկ կենտրոն կա, ձեզ Այնթապ կուղարկի:

Հաջորդ օրը վերադարձա գյուղ, ինչ որ տեսել, լսել էի, պատ-
մեցի: Մերոնք ուրախ էին, քրդերը՝ նեղսրտած: Մենք կահ-կա-
րասի, տնային իրեր չունեինք, որ փոխադրվելու դժվարությամբ
մասին մտածեինք: Եղած-չեղածը չալակեցինք, ճամփա ըն-
կանք: Ցավալի էր միայն այն, որ Ջապելը, ում մայրը թաղված էր
Ձանախչիում, չուզեց մեզ հետ գալ: Երբ մենք Նիդիպ հասանք,
տեղի հայերը ինձ հետ ուղարկեցին, որ Ջապելին համոզեմ, բե-
րեմ, բայց նա անդրդվելի մնաց: Մեր մեկնելու պահին ափո Հա-
մոն չատ էր հուզվել, որոշ տարածություն մեզ հետ քայլեց, ար-
ցունքոտ աչքերով համբուրեց ինձ, գրպանս երկու մեճիտե դրեց
ու նստեց գետին:

- Ես կարծում էի դավակ ունեմ,- ասաց,- բայց դու գնում ես...

Այդպես բաժանվեցինք: Տարիներ հետո իմացա, որ նա մինչև
Հալեպ ետևիցս եկել, ինձ է որոնել:

Պատերազմը վերջանալուց հետո հայահավաքը մեծ թափ էր
ստացել: Ով արաբական, քրդական, թուրքական բնակավայրե-
րից հայի բերեր, կամ տեղն ասեր, հնչուն ոսկի էր ստանում: Այս
նախաձեռնությունը չատ նպաստեց վերապրող հայերի փրկու-
թյանը:

Նիդիպում տարբեր գյուղերից ուրիշ հայեր էլ էին եկել: Բոլո-
րիս մի տեղ հավաքեցին, քարավան կազմեցին, տարան Այն-
թապ: Մեզ տեղավորեցին Սուրբ Աստվածածին եկեղեցու կողքի
դպրոցական շենքում, մեր ցնցոտիները հանել տվեցին, կտավե
չապիկներ հագցրին: Այդպիսով քուրդ լամուկի տեսքից մեկընդ-
միշտ ազատվեցի ու նախ և առաջ դպրաց դասի մեջ մտա: Մեր
դպրապետը՝ Գասպար Հոջան (Հոջա նշանակում է ուսուցիչ),
Շահե եպիսկոպոս Գասպարյանի հայրն էր: Ես, ինձ նման գյու-

ղերից հավաքված տղաները եկեղեցական կապա էինք հագնում ու ուրախանում, որ բռնությունը իսլամականաց հետո նորից քրիստոնյա ենք դարձել: Ձնայած քրդական գյուղում էլ էինք Սուրբ Գրքով աղոթում: Մենք պատահաբար հանդիպել էինք կյուրիների մեր հարևան Հովհաննես կյուրեղյանին, որը մեզ հոգևոր գրքեր էր տվել:

Այնթապում ես կոշկակարի աշակերտ դարձա, որ արհեստ սովորեմ, մայրս, մեծ քույրս էլ ուրիշ գործ գտան, սկսեցին աշխատել:

Ձէինք ուզում մեկնումեկին բեռ լինել:

ՊԼՈՒՏ Գ

ՈՐԲԱՆՈՅՈՒՄ



Այնթապի որբանոցը

Որոշ ժամանակ անց ամերիկացիների «Նիր Իստ Րիլիֆ» ընկերությունը որբանոց բացեց Այնթապում: Շենքի առջև հարյուրավոր որբեր էին հավաքվում: Ամեն օր որոշ մասին ընդունում էին, ներս տանում, լողացնում, հագցնում: Վերջապես փոքր եղբորս՝ Պողոսի հերթն էլ հասավ: Երբ հարցրել էին, թե քույր, եղբայր ունի՞, տվել էր մեր անունները: Այդպես ես ու Հնազանդը նույնպես որբանոցի սան դարձանք: Պողոսին ու ինձ՝ տղաների, Հնազանդին աղջիկների բաժինը տարան: Մեզ հատուկ համազգեստներ հագցրին, որոնց թևերին թվեր կային՝ Պողոսինը 101-ն էր, իմը՝ 102-ը: Այդ թվերով մենք չատ էինք հպարտանում, զինվորական համարանիշներ էինք համարում:

Ես մի քիչ կարդալ գիտեի, ինձ բարձր դասարան ընդունեցին, Պողոսին՝ մանկապարտեզ: Ամեն օր կանոնավոր դասեր, երգի ու մարզանքի պարապմունքներ էինք անցկացնում: Այդպես շարունակվեց մինչև 1920 թվականի սկիզբը, երբ ֆրանսիացիները, որոնք Այնթապում փոխարինել էին անգլիացիներին, սկսեցին հեռանալ: Թուրքերն, իհարկե, ուրախ, բայց հայերը մտահոգ էին: Ազգային կազմակերպությունները որբանոցում հերթապահություն էին սահմանել, որ մահմեդականները նոր ջարդեր չհրահրեն: Մենք ամեն գիշեր զինված հայ երիտասարդներ էինք տեսնում, որոնք շենքի շուրջը պտտվում, մեր անվտանգությունն էին պաշտպանում:



Քույրս՝ Հնազանդը,
եղբայրս՝ Պողոսը, ես
Այնթապում, որբանոց
ընդունվելուց առաջ:

1920-ի ապրիլին էր, առավոտյան թվաբանություն դասի էինք: Մեր ուսուցիչը՝ Բալաբան Հոջան, մի աչքը կույր, շատ խիստ մարդ էր: Անսպասելիորեն զենքի ձայն լսելով դուրս գնաց, Հետո ներս եկավ, գրպանից տասանոց ատրճաճակ հանեց, հրահանգեց.

- Տղաներ, չվախենաք...

Ասաց ու բակ իջավ: Մենք այնտեղից լսեցինք նրա ձայնը.

- Սիլահ պաշընա՝ պատրաստ, զենքի՛..

Հայերի և թուրքերի կռիվն սկսվեց:

Իրավիճակը մինչ այդ էլ էր լարված: Հալեպից բերված որբեր կային, որոնք թուրքական թաղերում էին տեղավորված: Ազգային իշխանությունները, ապահովության համար, նրանց մեզ միացրին: Ֆրանսիական բանակը տեղավորված էր հայկական թաղի՝ ամերիկյան քոլեջի ետևի մասում, բայց կռիվներին չէր խառնվում:

Թուրքերի հարձակումները շարունակվեցին մոտավորապես մինչև աշուն: Որբանոցի ճիշտ դիմացից՝ թուրքական թաղի մզկիթից անընդհատ կրակում էին մեր ուղղությամբ: Բարեբախտաբար մեր շենքի ետևի մասում մի խոշոր քարայր կար, վտանգի ժամանակ գնում, այնտեղ էինք պատսպարվում: Մեծ տղաները քարայրից մինչև որբանոցի շենքը խրամատ փորեցին, որ ապահով հասնենք մեր ննջարանները: Ննջարանների պատուհանները պաշտպանված էին ավազե պարկերով:

Ուտելիքի դժվարություն էլ կար: Պահեստի պաշարները սպառվում էին, մեզ օրական մի հաց, մի պնակ ապուր, մի բուռ պիստակ էին տալիս: Քիչ-չատ մայրս և քույրս էին մեզ օգնում, ուտելիք բերում: Մի անգամ Պողոսը, որն այդ ժամանակ մոտավորապես ութը տարեկան էր, մորս հարցրել էր.

- Ամեն օր, ամեն օր՝ այսինքն ամեն օր դո՞ւք պիտի մեզ կերակրեք:

Աչնանը, երբ ֆրանսիացիները վերջնականապես հեռանում էին Այնթապից, որոշվեց, որ որբանոցի սաներին իրենց Հետ տանեն: Մենք՝ մեծերս, ոտքով, փոքրերը՝ կառքով Այնթապից նախ հասանք Քիլիս, Հետո Ղաթմա քաղաքը, որտեղ մեզ գնացքի բեռնատար վագոնները լցրին, Հալեպ (Սիրիա), ապա Բեյրութ (Լիբանան) տեղափոխեցին: Մայրս և քույրս մնացին Այնթապում:

Ջերեյլի որբանոցը

Մեզ տեղավորեցին Բեյրութի արվարձանում՝ Կարանտինայում, վրանների տակ: Այլևս ապահով էինք, թուրքի վախ չկար: Հետզհետե լավ ուսուցիչներ ունեցանք, որոնցից էր Ստեփան Դարդունին: Նա որոշած է եղել Ամերիկա մեկնել, սակայն Սահակ կաթողիկոսը խորհուրդ է տվել որբանոցում աշխատանքի անցնել, Հայ երեխաներին օգտակար լինել: Ստեփան Դարդունին սրտամոտ է համարում նման թելադրանքը, մանավանդ որ

Ֆրանսիական բանակի սերժանտ էր եղել, կարգուկանոն սիրում էր:

Մենք մինչև աշուն Կարանտինայում մնացինք, հետո տեղափոխվեցինք Զերեյլ ծովեզրյա գյուղաքաղաքը: Դանիացի միսիոներները գնել էին նախկին շերամաբուծական գործարանի շենքը, վերածել որբանոցի և դպրոցի: Մեզ մի ընդարձակ սրահ էին տրամադրել, որտեղ թե՛ ճաշում և թե՛ քնում էինք: Այդ պատճառով էլ առավոտյան հենց զարթնում, անկողինները ծալելով իրար վրա էինք դիպում:

Ծովափին մի քանի սենյակներ էլ կային, որոնք դասարանների էինք վերածել: Սկսվեցին կանոնավոր դասավանդումները, մենք շատ էինք պարապում, որովհետև զգում էինք, որ բավական հետ ենք մնացել մեր հասակակիցներից: Դպրոցը արհեստանոց էլ ուներ, որտեղ դերձակություն, կոշկակարություն, ատաղձագործություն, քարտաշություն էինք սովորում: Սկզբնական շրջանում աշխատանքային օրերը ես կազմատանն էի անցկացնում, որն ինձ էին տվել ու հանձնարարել էին վերականգնել քայքայված գրքերը:

Ամեն առավոտ, կեսօրին մարմնամարզություն էինք զբաղվում, իսկ ժամը 4-ից հետո, Միջերկրական ծովում լողում: Ծովափին երկար, ավազե դաշտ կար, այնտեղ էինք խաղում: Զինավարժությունն անպակաս էր: Փայտե զենքեր ունեինք, բանակային կանոնակարգով մարտական պարապմունքներ էինք անցկացնում: Մի անգամ, երբ զորավարժության համար լեռ էինք բարձրացել, Ֆրանսիական նավատորմից մեզ նկատեցին, հեռահար լույսեր ուղղեցին մեր կողմը: Դրանից հետո Ֆրանսիացիները մեզ արգելեցին փայտե հրացաններով մարտական պարապմունքների դուրս գալ:

Որբանոցի սնունդը չէր բավականացնում, բողոքեցինք: Մեզ պատասխանեցին.

- Մենք չենք կարող ձեզ կշտացնել, մենք ձեզ միայն պիտի ապրեցնենք:



Հնազանդը, Պողոսը և ես՝
1920-ին, Բեյրութում:
Երեքս էլ որբանոցի
սան ենք:

Հակառակ սննդի պակասին, բոլորս առողջ ու կայտառ էինք: Կիրակի օրերը, ճաշից առաջ, հոգևոր պաշտամունքի էինք հավաքվում՝ աղոթում, կրոնական քարոզներ, երգեր լսում: Սկզբական շրջանում ինչ-որ պատվելի էր գալիս քարոզելու: Մի քանի անգամ էլ պատվելի Հատիտյանը եկավ և քանի որ Հայերեն լավ չգիտեր, թուրքերեն քարոզեց: Հերթական այցելությունը, հենց բեմ պիտի բարձրանար, Դարդունին ասաց.

- Եթե Հայերեն չքարոզես, ցած կիջեցնեն:

Պատվելին կոտրտված Հայերենով վերջացրեց քարոզն ու էլ չերևաց:

Որբանոցի սաների 100-ից 90 տոկոսը լուսավորչական էին, մեզ ուրախացնելու համար մի քանի անգամ էլ քահանա հրավրեցին:

Որոշ ժամանակ տնօրենի՝ Հայկազուն Քեչիչյանի գլխավորությամբ պայքար սկսվեց Ստեփան Դարդունիի դեմ: Իբր մեզնից հեղափոխականներ էր պատրաստում: Ի վերջո, 1922-ին, հեռացրին որբանոցից: Նա, ինչպես և նախօրոք որոշել էր, մեկնեց Ամերիկա: Մենք՝ սաներս, ցավով բաժանվեցինք նրանից, այնքան էինք հուզվել, որ մեր զգացումները զսպել չէինք կարողանում: Անտառում երկար խորհրդակցելուց հետո որոշեցինք ցերեկույթներ կազմակերպել, խոսել, երգել, արտասանել: Տնօրենից թույլտվություն խնդրեցինք, մերժեց: Վճռեցինք չենթարկվել:

Գաղտնի պատրաստվեցինք և պայմանավորվեցինք առաջիկա կիրակի օրը, ճաշից հետո, հավաքվել սրահում: Նախապես որոշված էր, թե ո՞վ պիտի վարի ցերեկույթը, ովքե՞ր պիտի արտասանեն, երգեն: Վճռված ժամին բոլորը ներկա էին: Էլեկտրականություն դեռ չկար, վառեցինք ամենամեծ՝ «Լյուքս» լամպը: Գևորգ Թերջանյանը հանդեսը բացված հայտարարեց: Նոր էինք սկսել «Մեր Հայրենիք»-ը երգել, տնօրենը՝ Հայկազուն Քեչիչյանը հայտնվեց: Ես դռան մոտ էի, տեսա, որ մինչև երգն ավարտվելը սպասեց, հետո մտավ ներս, հարցրեց.

- Ձեզ ո՞վ թույլ տվեց հավաք կազմակերպել:

Գևորգը պատասխանեց.

- Բոլորն էլ սրահում էին, ինձ ստիպեցին, որ վարեմ, ես էլ համաձայնվեցի:

Տնօրենը չըջվեց մեզ.

- Ճի՞շտ է ասում:

Բոլորս միաբերան՝

- Այո, պատասխանեցինք:

- Ուրեմն դուք ըմբոստներ եք, ասաց:

Տղաները աղմկեցին.

- Ո՛չ, մենք խռովարարներ չենք...

Մինչև անգամ հարձակվեցին, ուզեցին տնօրենին ծեծել, բայց ավելի մեծերը միջամտեցին, Հայկազուն Քեչիչյանին

փախցրին: Գիշերն այդպես անցավ: Հաջորդ առավոտյան ուսուցիչները բողոքի գործադուլ կազմակերպեցին, նրանց փոխարեն բարձր դասարանների աշակերտները կարգուկանոն կապահովեցին:

Մեր ընդհանուր տնօրենը՝ ամերիկացի միստր Դրավիսը, մի ուսուցչի՝ Ավետիս Գաղաղյանի հետ Հալեպ էր գնացել: Երկու օր անց վերադարձան: Միստր Դրավիսը եղելությունն իմանալու համար մանրամասն քննություն սկսեց: Ավետիս Գաղաղյանն ինձ մի կողմ տարավ, ասաց.

- Դու ոչ մի բանի չխառնվես:

Հին ծանոթներ էինք, մայրս Հալեպում, նրա հոր արհեստանոցում կտավ էր գործում, որ մեզ դրամ հասցնի:

Ձխառնվել, իհարկե, հնարավոր չէր: Երկար հարցուփորձից հետո որոշվեց տասներկու հոգու հեռացնել: Մենք՝ մի խումբ սաներով որոշեցինք ճանապարհը փակել և արգելք հանդիսանալ: Երբ տասներկու հոգուն ինքնաշարժ էին նստեցնում, բոլորս արդեն կազմ-պատրաստ սպասում էինք փողոցի անկյունադարձում: Մի քանի հոգի փոքր-ինչ ավելի մոտ էին դիրքեր գրավել, որպեսզի հենց ինքնաշարժը երևա, պայմանական նշաններով իրար լուր տան: Առաջին լուր տվողը ես պիտի լինեի, քանի որ բարձունքի վրա էի կանգնած: Նախ մի փոքր ինքնանաշարժ, հետևից որբանոցի «Վեն»-ը⁴ հայտնվեց: Առաջին ինքնաշարժի ուղևորներն ինձ նկատեցին, ձեռքները զենքերին, գոռացին.

- Չփախնես:

Ես կանգ առա: Դրավիսը «Վեն»-ից իջավ, հասավ ինձ ու «Քեոփեկ»՝ («Լակոտ») ասելով, գավազանով սկսեց խփել մեջքիս: Բայց ընկերներս փողոցն արդեն փակել էին քարերով, իրենք էլ ճիշտ կենտրոնում պառկել: Ոստիկանը հրամայեց.

- Բացե՛ք ճանապարհը...

Տղաները չչարժվեցին, հանգիստ ասացին.

- Մեր վրայով անցեք:

Ճարահատ՝ Դրավիսը ինքնաշարժը, տասներկու հեռաց-
վածների հետ ետ՝ որբանոց ուղարկեց: Մենք հասել էինք մեր
նպատակին:

Երեկոյան, երբ ճաշասրահ էինք մտնում, Դրավիսը կանգնած
էր դռների մոտ: Ընթրիքը չսկսած, ինձ ձեռքով արեց.

- Մոտ արի...

Մի սենյակ տարավ, շապիկս հանել տվեց, որ տեսնի՝ գավա-
զանի հարվածներից մեջքս վնասվե՞լ է: Հետո հարցրեց.

- Դու այդ ժամին դրսում ի՞նչ էիր անում:

Ես մտածել էի, որ ինձ այդպիսի հարց կտան, նախօրոք մորս
նամակ էի գրել, դրել գրպանս: Հանեցի, ցույց տվեցի:

- Գևորգ Թերջանյանին պիտի տայի,- ասացի,- որ մայրիկիս
հանձնի:

Դրավիսը լուեց, ինձ ճաշարան ուղարկեց:

Քիչ անց Բեյրութից ազգային իշխանությունն ներկայացու-
ցիչները եկան, մեզ համոզեցին, որ խելոք, հնազանդ լինենք,
բայց տասներկու հոգու վտարման որոշումը չկարողացան փո-
խել: Նրանց միայն անկողին, իրենց սովորած արհեստի գործիք-
ները տվեցին, Բեյրութ ուղարկեցին:

Կարծեմ 1922-ին, այս ամենից առաջ, մայրս Հալեպից Բեյ-
րութ էր փոխադրվել: Եկավ տեսակցություն: Դեմ-դիմաց նս-
տած խոսում էինք, նկատեցի, որ մազերն սկսել են սպիտակել:

- Մազերդ ճերմակել են,- ասացի:

- Քո էլ բեղերն են բուսել,- ասաց:

Այդ ժամանակ նա 42 տարեկան կլիներ, ես՝ 16, թե՞ 17:

Մի օր էլ ընկերոջս հետ որոշեցինք Անթիլիասի որբանոց՝ մեր
քույրերին, այնտեղից էլ Բեյրութ՝ մայրերին տեսնելու գնալ:
Ճաշից հետո թույլտվություն խնդրեցինք, ոտքով ճամփա ըն-
կանք: Երեկոյան ժամը 8-ի կողմերը Զուննի հասանք, մի աղը-
յուր գտանք: Կողքը նստել, մեր բաժին հացն էինք ուտում, մի
քանի հայ տղաներ տեսան, մոտեցան: Գլխի ընկանք, որ ազգա-
յին՝ Ղազարոս Ղալիկյանի որբանոցից են: Մեզ հետ ծանոթա-

նալ, զրուցելուց հետո գնացել, տնօրենին ասել էին, որ աղբյու-
րի մոտ երկու որբերի են հանդիպել: Տնօրենն անձամբ եկավ,
հարցուփորձ արեց և իմանալուց հետո, թե ովքե՞ր ենք, ասաց.

- Գիշերով ճանապարհորդելը վտանգավոր է, եկեք մեզ մոտ
քնեք, վաղը առավոտյան ես ձեզ գնացքով կուղարկեմ:

Մենք պնդեցինք, որ ոտքով ենք ուզում տեղ հասնել, շարու-
նակեցինք քայլել: Զգիտեմ, գիշերվա ժամը քանիսին Անթիլիաս
հասանք: Ո՛չ քաղաքին էինք ծանոթ, ո՛չ էլ որբանոցի տեղը գի-
տեինք: Մի խանութի առջև մեկնվեցինք, քնեցինք: Առավոտյան,
երբ դարձնեցինք, արևն արդեն ընկել էր մեր վրա, անցորդները
զարմացած մեզ էին նայում: Բացատրեցինք, որ աղջիկների
եթեմյան որբանոցը, մեր քույրերին տեսնելու ենք գնում: Ցույց
տվեցին ճանապարհը:

Որբանոցը գտանք, հանդիպեցինք մեր քույրերին: Այնտեղ
մեզ նախաճաշով էլ հյուրասիրեցին: Կերանք, ճամփա ընկանք
ղեպի Բեյրութ:




Ջերբյի որբանոցի նախկին սաների ավանդական հանդիպումը:

Բեյրութում իմ մայրն ու ընկերոջս մայրը հաստատվել էին միևնույն՝ Մուսեիզ բեյ թաղում, որտեղ շատ հայեր էին ապրում: Հարցնելով գտանք մորս տունը: Նա Մարիամ քրոջս հետ նոր էր եկել Հալեպից, հազիվ կարողացել էին մի անշուք սենյակ գտնել, տեղավորվել: Սենյակը միջանցիկ էր, լուսամուտ, դուռարան, խոհանոց չուներ: Հուսահատական վիճակ էր, ես ազդվել էի, բայց ինչ կարող էի անել:

Մի գիշեր մնալուց հետո, երբ հետո՝ որբանոց պիտի դառնայի, մորս ասացի.

- Մեզ էլ փող չուղարկես, մենք լավ-վատ ապրում ենք, ավելի ճիշտ կլինի ձեզ համար մի կարգին սենյակ վարձես:

Վերադարձին զնացքով մինչև Զուննի հասանք, այնտեղից ոտքով քայլեցինք մինչև մեր՝ Զերեյլի որբանոցը:



ՉԼՈՒՄ Դ

ԼԻՔԱՆԱՆՈՒՄ



Մեր ընտանիքի վերամիավորումը

Որբանոցային կյանքը շարունակվեց մինչև 1923-ի գարունը: Ընդունված կարգ էր՝ այն տղաները, ովքեր 17 տարեկան էին դառնում, պիտի ազատ արձակվեին: Տնօրինությունը Բեյրութի Կարանտինա թաղում տուն էր վարձել, որբանոցից դուրս գալուց հետո չափահաս տղաները, մինչև բնակվելու տեղ գտնելը, մոտ տասնհինգ օր, այնտեղ էին հաստատվում: Հունիսին իմ հերթն էլ եկավ: Ժամանակավոր կացարանում ինձ անկողին հատկացրին, որի կողքին տեղավորեցի փայտե սնդուկս: Ես այդ սնդուկում էի պահում «Երան»⁵ բառարանը, որ որբանոցում էին նվիրել՝ կազմարարական պարտաճանաչ աշխատանքի համար, թվարանություն դասագիրքս, Այնթապում մի «Դրաք»-ի⁶ վրայից գողացված «Կյանքի գործունեությունը» խորագրով գիրքը, հագուստներս, ինչպես նաև Ջեբելի ծովափից հավաքած խճաքարերս:

Տասնհինգ օրից ես փոխադրվեցի մորս մոտ, իսկ նրանք, ովքեր ծնողներ կամ զնալու տեղ չունեին, մինչև տուն գտնելը պատսպարվում էին եկեղեցու բակում:

Մայրս կյուրինցի մի ընտանիքի՝ Պողիկյանների հետ սենյակ էր վարձել, հենց բակում աշխատում էր ընկերուհու հետ: Նրանք, երկուսով, Ամերիկայի վաճառականների ուղարկած հին հագուստի հակերից բաճկոնակներ էին վերցնում, կարկատում: Թեև վարձատրությունը չնչին էր, երկուսին էլ գոհացնում էր՝ կյանքը համեմատաբար էժան էր:

Առաջին օրը, երբ ճաշի նստեցինք, իմ առջև հաց չկար: Բայց ես ամաչում էի ուզել, որովհետև որբանոցում մենք ուտում էինք այն, ինչ մեզ տալիս էին: Երկար համբերելուց հետո միայն, դժվարութեամբ կարողացա խնդրել՝ «Ինձ էլ հաց տվեք ասր», որը հարուցեց մեծ քրոջս ու ընկերուհու՝ երկու Մարիամների լիասիրտ ծիծաղը: Երկրորդ անգամ տնեցիները վրաս ծիծաղեցին, երբ խոհանոցում, տաշտի մեջ լողացա ու, ինչպես որբանոցում էինք անում, մաքուր սպիտակեղեն հագնելուց հետո կեղտոտները սնդուկիս մեջ դնելով, փակեցի:

Մի օր մայրս ասաց.

– Սուրբ Հակոբը՝ քո անվան տոնը մոտենում է, ընկերներիդ չաբաթ երեկոյան մեր տուն հրավիրիր:

Մինչ այդ ես ո՛չ լսել էի սուրբ Հակոբի մասին, ո՛չ էլ տոնը տեսել:

Շաբաթ օրը մայրս համեղ ուտելիքներ, նաև լոլիկով աղցան պատրաստեց, որը ձմռանը հազվագյուտ էր: Գինի էլ ունեինք, 5-6 ընկերներով հավաքվեցինք, ուրախացանք, լավ ժամանակ անցկացրինք:

Դրանից քիչ անց մեր սենյակակիցները Ամերիկա փոխադրվեցին, մենք առանձին մնացինք: Սակայն երկու Մարիամները՝ քույրս ու Մարիամ Պողիկյանը չատ չուտով Ամերիկայում միացան: Մեծ քույրս՝ Մարիամը, որը աքսորի ու գաղթականության տարիներին մորիցս անբաժան էր եղել, 1924-ին, թե՛ 1925-ին ամուսնացավ Հովհաննես Զեյթունցյանի հետ, Միացյալ Նահանգներ մեկնեց: Հովհաննեսը հորս հորեղբոր դստեր գավակն էր, երկու եղբայր ունեւ՝ Սաչատուրն ու Երվանդը: Նրանք ու իրենց մայրը՝ Մարիամ հորաքույրը մեզ հետ որբանոցում էին: Մարիամ հորքույրը մայրիկի պաշտոն էր ստանձնել: Մեր փեսան՝ Հովհաննեսը, որն ընտանիքի մեծ գավակն էր, դեռևս 1913-ին, թուրքական զինվորությունից ազատվելու համար մեկնել էր Ամերիկա: Հետո մորն ու երկու եղբայրներին էլ հրավիրեց: Միչտ թղթակցում էին մեզ հետ: Ի վերջո Հովհաննեսի



Մայրս՝ Մելիք Ժամկոչյանը Բեյրութի Մուսեիդ բեյ թաղում, կարուհի:

կողմից քրոջս՝ Մարիամի ձեռքը խնդրեցին: Համաձայնվեցինք: Որոշվեց, որ նրանք Ֆրանսիայում հանդիպեն, ամուսնանան, Ամերիկա գնան:

Այդ ժամանակ Բեյրութում Պորզիկյան անունով մեկը հայտնվեց, կյուրինցիների արձանագրեց, որ իբր Ֆրանսիայով Ամերիկա տանի: Այդ խմբին միացան մեզ բարեկամ Պետրոսյանները, որոնց հետ հարմար համարեցինք քրոջս էլ ուղարկել՝ չնայած Պորզիկյանի հետ ուղղակի առնչություն չունեն: Փարիզում քույրս ու Հովհաննեսը հանդիպում են, բայց անակնկալ դժվարություններ են ունենում: Պարզվում է, որ ըստ ֆրանսիական օրենքի, եթե որևէ մեկը ուզում է քաղաքացիական ամուսնություն կնքել, ապա պետք է արձանագրվի մի ամիս առաջ թերթում հայտարարություն տա, որպեսզի բոլորը տեղեկանան, հետագայում թյուրիմացություններ չառաջանան: Մարիամն ու Հովհաննեսը մի ամիս սպասում, պսակադրվում են, որից հետո մեր փեսան մեկնում է Ամերիկա, որ քրոջս ուղեթղթերն ուղար-

կի: Այդ ընթացքում քույրս մնում է Պետրոսյանների մոտ, հրավիրագիրն ստանալուն պես՝ մեկնում: Իսկ բոլոր այն կյուրինցիները, որոնք Ամերիկա տեղափոխվելու հույսով էին Ֆրանսիա հասել, շատ շուտով հուսախաբ են լինում: Պորզիկյանը բոլորի դրամները զրպանում, անհետանում է: Կյուրինցիների մի մասը այդպես էլ մնաց Ֆրանսիայում, մյուս մասը հետ՝ Բեյրութ վերադարձավ: Վերադարձողների մեջ էին Պետրոսյանները:

Մեր ընտանիքը երկար ժամանակ բաժանված էր՝ ես, Հնազանդ քույրս, Պողոս եղբայրս որբանոցում մեծացանք: Քանի որ նրանք երկուսն էլ ինձնից փոքր էին, որբանոցում մի քանի տարի ես մնացին, հետո միացան մեզ: Հնազանդը դերձակուհու մոտ աշխատանքի անցավ, որ կարել սովորի, Պողոսը սկսեց հաճախել սուրբ Նշան ազգային վարժարանը: Վեցամյա դասընթացն ավարտելուն պես՝ աշխատանքի մասին մտածեց: Ֆրանսիական կառավարությունը, որն այդ ժամանակ հովանավորում էր Սիրիային ու Լիբանանին, «Կատաստր»՝ հողաչափական հաստատություն էր հիմնել: Պողոսը կարողացավ ընդունվել այդ հիմնարկը, գործը շատ շուտ սովորեց, աշխատեց Սիրիայի տարբեր՝ Լաթաքիա, Հոմս, Համա քաղաքներում: Վերջում Բեյրութ՝ կենտրոնական գրասենյակը տեղափոխվեց:

Կուսակցական հրապուրանքներն ու հակամարտությունները

Որբանոցում մենք մոտ ընկերներով խումբ ունեինք, հաճախ անտառ էինք գնում, հեղափոխական երգեր երգում: Ճիշտ է, մեր սիրելի ուսուցիչը՝ Ստեփան Դարդունին վաղուց արդեն Ամերիկա էր մեկնել, բայց ոգին մնացել էր: 1923-ի հունիսին, երբ ես հեռացա որբանոցից, իմացա, որ ինձնից առաջ դուրս եկողներն անցել են դաշնակցության շարքերը: Նրանք իմ անունով էլ դիմումագիր գրեցին, բերեցին, որ ստորագրեմ: Շատ չանցած ընդունված էի: Այդ տարիներին դաշնակցականների և



Կյուրինցիների երիտասարդական մշակութային միությունը:

հնչակյանների միջև ներքին մրցակցություն կար, յուրաքանչյուր կուսակցություն ձգտում էր ավելի մեծ թվով երիտասարդների ներգրավել:

Մեր կուսակցությունը դեռևս ակումբ չուներ: Մի բժիշկ, որի անունն արդեն չեմ հիշում, իր հիվանդանոցում մեզ սենյակ էր տրամադրել: Նորեկներս ՀՅԴ-ի ծրագիր-կանոնադրության մասին որոշակի գաղափար չուներինք, պատանեկան միություն կազմեցինք, որպեսզի միասին պարապենք, կուսակցության վերջնական նպատակը ըմբռնենք: Մեր միության անդամները բավական մեծ թիվ էին կազմում, մասնակցում էին թե՛ կուսակցական և թե՛ պատանեկան ժողովներին: Մենք բազմաթիվ կարող, բանիմաց ղեկավարներ ունեցանք, որոնցից մեկը Հրաչ Տասնապետյանի հորեղբայրն էր՝ Հակոբ Սիմոնին: Նրա դասախոսությունները խիստ ուսուցողական էին: Դժբախտաբար

Թոքախտով վարակվեց, գնաց բուժվելու, ի վերջո մահացավ: Սիրում էինք նաև Արչակ Հովհաննիսյանին, որոշ շրջանում Շահան Նաթալիին, ումից շատ բան սովորեցինք: Ավելի ուշ նա Ամերիկա մեկնեց, լսեցինք, որ Ռամկավար կուսակցությանն է հարել: Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Կարո Սասունին, ուրիշներ մեզ համար օգտակար դասախոսություններ էին կարդում, հաճախ կազմակերպում էինք գաղտնագնացություններ, որոնք հաճելի մթնոլորտում էին անցնում:

Փաստորեն շարաթվա մի քանի օրը ես ակումբում էի անցկացնում, խեղճ մայրս մինչև իմ վերադարձը չէր քնում: Մենք դեռևս բնակվում էինք Մուսեիզ բեյում, ուր հասնելու համար պետք էր օտար թաղերից անցնել: Բեյրութի մահմեդականներն սկսել էին հայերին լավ աչքով չնայել, որովհետև հասկանում էին, որ մենք ավելացնում ենք քաղաքի քրիստոնյաների թիվը: Մայրս Ամերիկա՝ մեր փեսա Հովհաննեսին գրեց իմ կուսակցական հակումների մասին, ու նա, քանի որ պահպանողական համոզմունքներ ուներ, երկար նամակով բացատրեց դրա անօգուտ լինելը, խորհուրդ տվեց հրաժարվել, բայց ես չլսեցի:

Ճիշտ հակառակը, այդ օրերին իմացանք, որ Լևոն Շանթն ու Նիկոլ Աղբալյանը նավով Բեյրութ են գալու, դիմավորելու գնացինք: Երկար սպասեցինք, վերջապես ափ ելան: Մեզ շատ հպարտ էինք զգում, որ նրանց ձեռքը սեղմելու, բարի գալուստ մաղթելու պատիվն ունեցանք: Նույնը Ռուբեն Տեր-Մինասյանի այցելության ժամանակ պատահեց: Երիտասարդներս ուղղակի պաշտում էինք նրան, անընդհատ շուրջն էինք պտտվում: Շատ հետաքրքրական դասախոսություններ կարդաց: Մի ելույթի ժամանակ էլ հարյուր հատանոց ծխախոտի տուփը դրեց սեղանին, առաջին գլանակը լուցկիով, հաջորդները մեկը մյուսից վառեց: Այդպես երկու ժամից ավելի անդադար ծխում էր:

Սովորաբար, երբ որևէ դաշնակցական գործիչ կամ մտավորական էր գալիս Բեյրութ, «Ծթել Լյուքս»-ում էր իջևանում: Հենց լսում էինք հերթական այցելուի ժամանման մասին, գնում



Գաղափարական ընկերներով:

էինք տեսակցություն: Այդպես Հակոբ Օշականի գալուստն իմացանք ու մի ընկերոջ հետ իսկույն Հյուրանոց հասանք: Երբ մտնեցա ձեռքը սեղմելու, ասաց.

- Ականջներդ քաշելու եմ:

Զարմացա.

- Ի՞նչ եմ արել որ:

Մատը երկարեց.

- Քոնը չէ, նրանը...

Շրջվեցի, տեսնեմ իմ ետևից էդուարդ Բոյաջյանն է գալիս:

Ես առաջիններից մեկն եմ անցել «Համազգային»-ի կրթական միության շարքերը: Մի անգամ ինձ նման 8-10 երիտասարդի կանչեցին, թելադրեցին, որ մեր շրջապատից ցանկացողների հավաքագրենք, խմբեր կազմենք: Իմ հայրենակիցներից տասը հոգու կարողացա արձանագրել, որոնց ամսական անդամավճարները հավաքում, հանձնում էի «Համազգային»-ի վարչությունը: Որոշ ժամանակ անց ոմանք հաշվետվություն պահանջեցին: Այդ մասին ասացի Շանթին: Նա սրտնեղեց.

- Ով մեղ չի վստահում, թող անդամավճար չմուծի:

Ինքս էլ շատ զբաղված էի, երկար չկարողացա շարունակել անդամակցությունս:

Ինչ վերաբերում է կուսակցությանը, երբեք չեմ ձգտել դեկավար մարմնի անդամ դառնալ: Բայց պատահեց, որ միջկուսակցական սպանություններ տեղի ունեցան, Լիրանանի աչքի ընկնող դաշնակցականներին ձերբակալեցին, բանտարկեցին: Ու քանի որ կուսակցությունը ընդհատակ անցավ, կենտրոնական կոմիտեն փոխադրվեց Հալեպ, Լիրանանում նոր՝ «Քրիստափոր» գաղտնի կոմիտեն ստեղծվեց, որի կազմում կենտրոնական կոմիտեի որոշմամբ երկու շրջան ընդգրկեցի նաև ես: Հաճախ, որպեսզի ուշադրություն չգրավենք, Կարանտինա էինք հասնում, գաղտնի ժողովներ գումարում և, սովորաբար, հաշվեքննիչի պարտականությունները վստահում էին ինձ:

1952-ին կուսակցությունը որոշեց, որ ես Սուրբ Նշան եկեղեցու թաղական խորհրդի անդամ ընտրվեմ: Ընտրվեցի: Թաղական խորհրդից որևէ մեկը պետք է դպրոցի հոգաբարձության անդամ էլ լիներ, որ թաղականությունը տեղյակ դարձներ ներքին անցուդարձին: Այդ պարտականությունը ես ինձ վստահեցին, այսինքն պաշտոնապես թե՛ թաղական խորհրդի և թե՛ հոգաբարձության ժողովներին էի մասնակցում: Բարեբախտաբար մեր տունը եկեղեցուն մոտ էր, ժողովների գնալ-գալը դժվար չէր: Դա խորեն եպիսկոպոսի՝ ապագա կաթողիկոսի առաջնորդության շրջանն էր, որը գործունյա, միաժամանակ կատակասեր հոգևորական էր:

Մի անգամ, դպրոցական տարեվերջի հանդեսին, նստած էինք կողք-կողքի: Դռների մոտ աղջիկս՝ Մելինեն հայտնվեց, ձեռքով հաղթության նշան արեց: Խորեն եպիսկոպոսը չըջվեց ինձ, հարցրեց.

- Կապուտաչյադ (Մելինեն խաժակն է) ի՞նչ է ուզում:

- Հասկացնում է, որ ֆրանսիական բակալորիայի քննությունները հաջող է հանձնել:

The image shows a historical identity card from the State of Greater Lebanon (Etat du Grand Liban) for Sandjak D. The card is bilingual, with French and Arabic text. It includes a photo of a man, a signature, and various official stamps and seals. The card is dated 1952 and is signed by the Chief of the Bureau of the State-Civil and the Secretary.

Key details on the card include:

- Header:** ETAT DU GRAND LIBAN, CARTE D'IDENTITE, SANDJAK D.
- Personal Information:** Nom et prénoms, Prénoms du père, Prénoms de la mère, Date et lieu de naissance, Rite, Profession, Lettré ou illettré, Marié ou célibataire, Domicile(1), Sandjak.
- Signature and Photo:** A black and white photo of a man with a mustache, wearing a suit and tie, is placed next to a signature.
- Official Stamps:** There are several official stamps, including one from the "Gouvernement Libanais" and another from the "Bureau de l'Etat-Civil".
- Signatures:** The card is signed by "Le Chef du Bureau de l'Etat-Civil" and "Le Secrétaire".
- Language:** The card is written in both French and Arabic, with the French text on the left and the Arabic text on the right.

Իմ առաջին անձնագիրը, Բեյրութ, 1952 թ.:

Հետագայում խորեն եպիսկոպոսը կաթողիկոսական փոխանորդ նշանակվեց, նրա փոխարեն Լիբանանի առաջնորդ ընտրվեց Տաճատ արքեպիսկոպոսը:

Կաթողիկոսական ընտրությունը

Կիրիկյան կաթողիկոսության վեհափառ Գարեգին Հովսեփյանցի վախճանվելուց հետո զահր թափուր մնաց: 1956-ին նոր կաթողիկոս ընտրելու նպատակով ազգային ժողով պիտի գումարվեր: Ըստ ընդունված կարգի՝ Ամենայն Հայոց Հայրապետը ընտրությունն ու օծումին մասնակցելու համար պատգամավոր էր ուղարկելու, ինչպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության ժամանակ Կիրիկյան կաթողիկոսությունն էր ուղարկում:

Էջմիածնի Մայր Աթոռին ուղղված պաշտոնական հրավերին որպես պատասխան, Վեհափառը՝ Վազգեն Ա-ն հեռագրով տեղեկացրեց, որ անձամբ պիտի Լիբանան այցելի, ընտրությունն ու օծմանը մասնակցի: Լիբանանահայությունը խանդավառված էր, կաթողիկոսին ինքնաշարժերի մի անվերջանալի քարավան դիմավորեց, որն անցավ Լիբանանի պետական թանգարանի առջև կառուցված հսկա ծաղկեկամարի տակով: Կամարը պատրաստել էր Սուրբ Նշան եկեղեցու թաղական խորհուրդը, որի կազմում էին նաև ես:

Վերջապես ազգային ժողովը 49-ը պատգամավորներով սկսվեց: Սիրիայից ու Լիբանանից ընտրված կաթողիկոսական փոխանորդը կատարեց բացումը և առաջարկեց դիվան կազմել: Վազգեն Վեհափառը ձայն խնդրելով ուղեց ժողովը մեկ շաբաթով հետաձգել, որպեսզի ինքը կարողանա իրավիճակին մոտիկից ծանոթանալ: Պատգամավորները տվեցին իրենց համաձայնությունը, բայց որպեսզի նիստն աննպատակ անցած չլինի, առաջարկեցին նախքան փակված հայտարարելը, դիվան ընտրել: Ամենայն Հայոց Հայրապետը դեմ արտահայտվեց, ու երբ ժողովը համենայն դեպս որոշեց դիվան կազմել, հեռացավ նիս-



Զարեհ Ա կաթողիկոսի մուտքը Բեյրութի Սուրբ Նշան Մայր եկեղեցի՝ օծումից հետո:



Բեյրութի Սուրբ Նշան եկեղեցու թաղական խորհուրդը:

տից: Նրան հետևեց 11 հոգի: Մնացած 38 պատգամավորները բացարձակ մեծամասնություն էին, ժողովը շարունակեցին, ընտրեցին դիվանն ու մեկ չաբաթով ժողովը հետաձգեցին:


Այնուհետև, որոշված օրը, ազգային ժողովը գումարվեց և միաձայն Ջարեհ եպիսկոպոս Բայասյանին Կիլիկիո աթոռի կաթողիկոս ընտրեց:

Մի քանի օր անց Վաղգեն Վեհափառն իր հերթին եպիսկոպոսական ժողով հրավիրեց և գրավոր պայմաններ առաջադրեց Ջարեհ կաթողիկոսին: Որը բոլորն էլ մերժեց: Այդ ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետի կողմնակիցները Հայտարարեցին, որ իրենք չեն ընդունում Ջարեհ Վեհափառին, ընտրությունն ապօրինի են համարում: Նրանք նույնիսկ հանրաքվե անցկացրին, նյութական հսկայական միջոցներ վատնեցին, որ կրոնական առանձին համայնք ստեղծեն, բայց Լիբանանի սահմանադրությունը երկրորդ համայնքն ունենալ չէր թույլատրում: Ճարահատ էջմիածնականները բոյկոտի ենթարկեցին եկեղեցիները: Լիբանանահայության կրոնական պառակտումը երկար շարունակվեց...

Աշխատանքային ասպարեզը

1923-ին, երբ որբանոցից դուրս եկա, դրսի աշխարհի մասին պատկերացում չունեի: Գաղթականության և որբանոցային՝ ընդհանուր հաշվով 8 տարիները մեզ ուրիշ տեսակ էին մեծացրել:

Տուն վերադառնալուց հետո, բնականաբար, իմ առաջին գործը արհեստ սովորելը եղավ, թեև որբանոցում դերձակության մասին գաղափար կազմել էի: Բարեկամս ինձ մի վարպետ դերձակի արհեստանոց տարավ, որի մի կեսում ինքն էր աշխատում, մյուսում՝ վարսավիրը: Իմ վարպետը բարի մարդ էր, բայց դրամի մասին խոսք չէր կարող լինել, ես դեռ արհեստ պիտի սովորեի: Որոշ ժամանակ անց միայն, երբ բավական հմտացա,



Եղբայրս՝ Պողոսը
«Կատաստր»-ի
պաշտոնյա:

վարպետս սկսեց չաբաթական 25 դուրուշ տալ, որն այդ տարիներին որոշակի արժեք ուներ: Քիչ ավելի ուշ՝ չաբաթականս 125 դուրուշի հասավ, ու տնեցիներն ասացին.

- Դու արդեն կարող ես քո վաստակով ապրել:

Այդպես բավական աշխատեցի, մինչև վարպետս մի գործընկեր գտավ, Հավուզ Սահաթիե թաղում արհեստանոց առավ: Տանտերը հույն էր, շատ բարի, հայուհի կին ուներ: Ցավոք, հետո այդ նույն վարպետս ուրիշ տեղ գործ գտավ, գնաց, ես նոր վարպետի հետ մնացի: Նա Հալեպից էր եկել, տղան ամերիկյան հիվանդանոցում հայտնի բժիշկ էր: Այդ վարպետիցս առանձնապես սովորելու բան չունեի, նա նույնիսկ հաշվել չգիտեր: Այդպիսի դերձակների համար հատուկ մետրաչափեր կային: Քանի որ սովորական մարդու կուրծքը մոտավորապես 48 սմ է, ավելի մեծ կամ փոքր լինելու դեպքում սանտիմետրերի գծիկները համապատասխանաբար մեծացված կամ փոքրացված էին լինում, որ հաշվելը հեշտ լինի: Վարպետս միայն այդ մետրաչափն էր գործածում:

Նա, սակայն, չատշուտ մահացավ, ու արհեստանոցը, որտեղ բացի մի հին կարի մեքենայից ոչինչ չկար, ինձ մնաց: Մի քանի ամիս ինքնուրույն աշխատեցի, հետո զգացի, որ դժվարանում եմ, փորձ չունեմ: Բացի դրանից եկամուտս շատ քիչ էր:

Ճարահատ, հենց շուկայում, դերձակ վաճառականի մոտ իրեն բաճկոն կարող աշխատանքի անցա: Նյութականս լավ էր, բայց դարձյալ գոհ չէի: Ուսանալիս այն մասը, որտեղ աշխատում էի, նեղ էր, խճողված: Կարի մեքենային մոտենալու համար կռացած պիտի քայլեի, որ գլուխս առաստաղին չդիպչեի: Մի քանի տարի էլ այդտեղ աշխատեցի, հետո մի բարեկամ առաց, որ կտորեղենի ինչ-որ առևտրական այնպիսի վաճառող է փնտրում, որը դերձակություն իմանա, գաղափար ունենա, թե ո՞ր կերպասը ինչի է հարմար: Ներկայացա, ընդունեցին: Շաբաթական վարձատրությունն այդ ժամանակվա համար լավ էր: Միերկու տարի անց էլ առաջարկեցին Դամասկոս գնալ: Այնտեղ մի հաճախորդ ունեին, որը 350 դեղին ոսկի պարտք ուներ և ոչ մի կերպ չէր կարողանում վճարել: Ոոստացան, որ հենց խանութի ապրանքները հաշվեկշռի ենթարկեմ, գործերը կարգավորեմ, ինձ հետ ընկերովի նոր մասնաճյուղ բացեն:

Մեկնեցի Դամասկոս, խանութը հանձնեցին ինձ: Ընկերոջս հետ սենյակ վարձեցի, մոտ մի տարի մնացի: Երբեմն միայն մերոնց տեսնելու համար Բեյրութ էի գնում, շատ շուտ վերադառնում: Դամասկոսի կյանքը դաշնակցական ընկերների՝ Արմեն Անուշի, Լոյսաճյանի, Գալիպյանի, Բոյաջյանի, ուրիշների հետ հետաքրքիր էր անցնում: Ուղղակի գործ չկար՝ չնչին եկամուտով էի աշխատում: Մի տարի դիմանալուց հետո, ինչ գնով որ կարողացա, ծախեցի խանութը, գումարը հանձնեցի տիրոջը, վերադարձա Բեյրութ:

Պարզվեց՝ արհեստանոցի տերերը իմ փոխարեն ուրիշ երիտասարդի են վերցրել: Փաստորեն գործազուրկ էի: Երկար խորհրդակցելուց հետո որոշեցինք, որ ձևարարություն դասընթացներ ավարտեմ, հետո դերձականոց բացենք: Մի խանութ կար,



Գործընկերներիս հետ:

որի վարձը շատ թանկ՝ տարեկան 45 դեղին հնչուն ոսկի էր, այդ պատճառով տարի ու կես դատարկ էր մնացել: Որոշեցինք վարձել:

Պայմանագիր կնքեցինք, որի համաձայն հարյուր դեղին ոսկի եղբայրս ու ես պիտի դնեինք, նույնքան էլ նախկին տերերս: Երկու հարյուր ոսկիով խանութը բացեցինք: Զևարարություն նոր էի սովորել, դժվարությունները շատ-շատ էին, բայց հաղթահարեցի: Մեր գործընկերների հետ պայմանավորվել էինք, որ կերպասը միշտ իրենցից պիտի վերցնեմ, չնայած զգում էի, որ շուկայի գներից թանկ է:

Մի անգամ նրանցից յարդը 18 ոսկի դուրուշով ապրանք բերեցի, հետո մի ուրիշ տեղ այդ նույն ապրանքը կիլոյով գտա: Հաշվեցի, տեսա, որ անհամեմատ էժան է, յարդը՝ 13 դուրուշ: Կիլոյով բոլորը գնեցի, հասցրի խանութ: Նոր էի ձևարարական սեղանին փոել, գործընկերս, որ պատահաբար անցնում էր փո-

ղոցով, նկատեց, հարցրեց, թե որտեղից եմ գտել: Չուզեցի ասել, թե որտեղից, բայց դրանից հետո մինչև տարեվերջ իրենցից ապրանք չգնեցի: Տարեվերջին միայն ասացի որ նման պայմաններով մեր ընկերակցությունը անհնար է շարունակել: Նույնիսկ խիստ պայման դրեցի.

- Կամ դուք գնեք խանութը, կամ թողեք, որ ես գնեմ...

Համաձայնվեցինք, որ ապրանքի կեսի դրամը վճարեմ, խանութը ինձ ու եղբորս մնա: Վեց ամսվա պայմանաժամով մուրհակ ստորագրեցինք: Եղբորս՝ Պողոսի աշխատանքով ապրում էինք, խանութի եկամուտով կանոնավոր մուրհակները վճարում: Սնանութն ի վերջո մեզ մնաց, Պողոսի ու իմ ցանկությունները կոչվեց «Ժամկոչյան եղբայրք»:

Երկրորդ Համաշխարհայինը

Հետզհետե, աշխատանքային հաջողություններին համընթաց մեր կյանքն էլ լավացավ: Սկզբում չորս սենյականոց տան մեջ չորս ընտանիքով էինք ապրում, հետո սուրբ Նշան եկեղեցու ու դպրոցի հարևանությամբ տուն կարողացա վարձել: Եկեղեցուն մոտ լինելը հատկապես մորս համար շատ-հարմար էր, երկար քայլելուց ազատվել էր: Պողոսն արդեն Բեյրութ՝ «Կատաստր» հաստատության կենտրոնական գրասենյակն էր փոխադրվել: Մեր նյութական վիճակը բարելավվում էր: 1935-ին որոշեցինք օդափոխության մեկնել ու մի քանի հայրենակից ընտանիքներով Բիքֆայա գնացինք, մինչև անգամ գյուղի փողոցներում Վարդավառի տոներ տոնեցինք: Անմոռանալի օր էր՝ առավոտ վաղ գիշերանոցներով փողոց էինք իջել ու, ինչպես Կյուրինում, իրար ջրում էինք: Բիքֆայացիները նայում, մեզ հետ, մեր չափ զվարճանում էին: Նույնիսկ սկսեցին մեզ դուլբերով ջուր հասցնել, որ իրար վրա լցնենք:

Դրանից հետո, մինչև 1966 թվականը, սովորություն դարձրինք ամեն ամառ այս կամ այն գյուղը օդափոխության մեկնել:



Լեռնագնացություն:

Ընդ որում տղամարդիկս աշխատանքը էինք թողնում, չաբաթվա վեց օրը քաղաք՝ խանութ էինք գնում-գալիս: Սակայն Բեյրութում ամառն այնքան տոթ էր, որ երբեմն էինք դիմանում, կեսօրին ծով էինք գնում, զովանում: Գյուղական գիշերները շատ հաճելի էին, քնում, մոռանում էինք քաղաքի չոգը:

Որոշ ժամանակ անց, ավելի ճշգրիտ՝ 1937-ին, քրիստոնյաների և իսլամների հարաբերությունները Լիբանանում սրվեցին: Մենք աշխատում էին աննկատ մնալ, ուշադրություն չգրավել: Մի օր շուկայի խանութները շուտ փակեցին, տուն եկա: Պողոսը դեռ չէր վերադարձել, մերոնք մտահոգ էին: Ես պատուհանի մոտ կանգնած լարված դուրս էի նայում, սպասում: Հանկարծ նկատեցի, որ եղբայրս հայ ընկերների հետ բարձրանում է մեր փողոցի զառիվերով: Հետևից իսլամ ամբոխը: Ինը միլիմետրանոց «Գոլդ» ինքնաձիգ ունեի, իսկույն թաքստարանից հանեցի, հարևան տան տանիքն անցա, հարմար դիրք գրավեցի: Երբ Պողոսն ու ընկերները մեր թաղը մտան, արագացրին քայլերը: Ամ-

րոխն սկսեց վազելով հետապնդել, ուր որ է կհասներ: Ճարահատ օդ կրակեցի: Անականկալի եկած իսլամները կանգ առան, Պողոսն ու մյուս հայ երիտասարդները օգտվեցին վայրկենական շփոթից, այս ու այն կողմ ցրվեցին: Ոստիկանները սակայն լսել էին զենքի ձայնը, խուժեցին մեր տուն, սկսեցին խուզարկել: Մինչ այդ ես հասցրել էի «Գողգ»-ը թաքցնել բաղնիքի պատուհանագոգի դրսի կողմում, բայց պատյանը մոռացել էի բարձիս տակ: Ոստիկաններից մեկը անկողինը շուռ տվեց, նկատեց պատյանը, բայց ոչինչ չառաց, ներքնակը լուռ ուղղեց, ընկերներին գլխով գնալու նշան արեց: Այդպես մեծ փորձանքից ազատվեցինք:

1939-ին Ալեյում էինք, սեպտեմբեր ամիսն էր: Զայնասփյուռն անսպասելի հայտնեց, որ սկսվել է երկրորդ համաշխարհային պատերազմը: Ամեն ոք մտահոգ էր, չնայած ֆրանսիական բանակը Սիրիայում և Լիբանանում էր: Բոլոր ձայնասփյուռները հավաքեցին: Մերը մենք ինքներս սնդուկի մեջ դրինք, մեխեցինք ու հանձնեցինք: «Բլեկ աուտ» հայտարարվեց, բոլոր պատուհանների ապակիները կապույտ ներկվեցին, ընդ որում գիշերները փեղկերը պետք էր փակ պահել: Լրատվական կայաններն անընդհատ հաղորդում էին, որ «առանձնահատուկ նորոթյուն չկա», բայց մենք իմանում էինք, որ գերմանացիները Լեհաստանը բռնազրավել են, հետո լուր հասավ, որ ֆրանսիացիների սահմանային՝ «Մաժինո» պաշտպանական գիծը խորտակվել է: Եվ իրոք՝ գերմանացիները Բելգիայի վրայով Ֆրանսիա մտան, ամբողջ երկիրը գրավեցին: Նույն կերպ իտալացիները Աֆրիկայում վարվեցին: Առայժմ Բեյրութին կարծես վտանգ չէր սպառնում:

Պատերազմական հաջորդ ամառը որոշեցինք քրիստոնեական գյուղում հանգստանալ: Ունեութի ապրանքների մի մասը հակերով մեզ հետ տարանք, իսկ մեր ունեցած կանխիկ գումարը ոսկեդրամի վերածեցինք, մահճակալների երկաթե ոտքերի մեջ պահեցինք: Տղամարդիկս շաբաթը երկու անգամ՝ չորեք-



Ընկերներիս հետ:

շաբթի ու շաբաթ օրերին էինք գյուղ բարձրանում: Մի անգամ Բեյրութում այնպիսի սարսափելի ուժեղացում լուծվեց, որ ստիպված բաղնիք մտա, կարծելով, որ երկտակ տանիքն ավելի ապահով կլինի: Քիչ անց մեր ներքնի հարևանուհին՝ տիկին Վարսենիկը եկավ, ինձ իրենց տուն՝ առաջին հարկ տարավ: Մի ուրիշ անգամ էլ մեր խանութի թաղը ուժեղացեցին, մի արկ դիմացի շենքի վրա ընկավ: Երեք հարկը ծակել, չորրորդի առաստաղին գամվել էր: Եթե պայթեր, ամբողջ թաղը քարուքանդ կաներ:

Թեև անընդհատ վախուղողի մեջ էինք, բայց գործերը վատ չէին: Մեր ունեցած ապրանքի գինը հետզհետե բարձրացավ,

երբեմն տասնապատիկին հասավ: Մինչև անգամ Պողոսն իր պաշտոնից հրաժարվեց, խանութ փոխադրվեց, երկուսով ավելի հեշտ էր աշխատելը:

Այդ ամառ էր, որ որոշեցինք խմբով Սաննին լեռը բարձրանալ: Մայրս մի կաթսա միջուկով քյուֆթա էր պատրաստել, հետներս տարանք: Հենց տեղ հասանք, զենքս վերցրի, որսի գնացի: Կեսօրին, երբ ճաշի պիտի նստեինք, սեղանին ոչ մի քյուֆթա չկար: Հարցրի, թե ինչ եղավ, ասացին.

- Համը տեսնելու համար կաթսան բացեցինք, չզգացինք, թե ինչպես բոլորը կերանք:

Ընկերներին՝ Ազարյանի, Սեֆերյանի, Ջերբեգյանի, զինագործ Ավետիսի, ուրիշների հետ հաճախ էի որսորդություն գնում: Ավետիսը հարցնում էր.

- Այդքան չատ քայլելուց չե՞ս հոգնում:

Պատասխանում էի.

- Հո թռչունն ինձ չի փնտրելու, ես եմ իրեն փնտրելու:

Որսը կարևոր էր, չրջագայությունը լեռներում ու անտառներում, գետերի ափերին չատ հաճելի էր:



Մայրս:

Իմ ամուսնությունը

Ես որբանոցային չորս տարիներն անց էի կացրել տղաների հետ: Երկսեռ կյանքն ինձ խորթ էր, աղջիկների հետ գրեթե չէի շփվել: Չորս տարի, անընդհատ, ես միմիայն տղաների հետ էի եղել, աղջիկներից ամաչում, քաշվում էի: Որբանոցում, երբ դեռևս կազմատանն էի աշխատում, մի օր գնացի ջրհորից ջուր բերելու: Երբ դույլն արդեն լցվել էր ու վեր էի բարձրացնում, մի աղջիկ մոտեցավ, ուղեց օգնել: Ծիկնեցի, ձեռքս թուլացավ, քիչ մնաց պարանը ետ սահեց: Դժվարություններս հավաքեցի, դույլը հանեցի: Աղջիկն ինձ տարեկից էր, որբանոցի մայրիկներից մեկի դուստրը:

Կյանք մտնելուց հետո անգամ, ընտանիքներում, հարաբերություններն աղջիկների հետ, իհարկե, տարբեր էին: Երկուստեք տարեց, բամբասկոտ կանանցից զգուշանում էինք: Երեկոյթների ժամանակ, երբ տղա ու աղջիկ պարում էին, աղջիկը մի ձեռքը տղայի կրծքին էր դնում, որ իրեն չատ չմոտենա:

Պատահեց այնպես, որ իմ աշխատած խանութը ծանոթ աղջիկ եկավ, առաջարկեց միասին կինո գնալ: Մերժեցի: Մի ուրիշ հայ աղջիկ, որն իմ աշխատատեղից ոչ հեռու սպասուհի էր, գրել-կարդալ չգիտեր, ստացած նամակներն ինձ էր բերում, որ կարդամ, պատասխան գրեմ: Մի երեկո եկավ ու ասաց.

- Տեսցինք կիրակի օրը լեռ պիտի բարձրանան, ես մենակ եմ լինելու, արի նամակը մեզ մոտ գրի:

Նորից մերժեցի: Տարօրինակ հոգեբանություն ունեի՝ կարծում էի, որ եթե հայ աղջկա հետ չես ամուսնանալու, խաբելու իրավունք չունես:

Երբ ՀՅԴ պատանեկան միությունն անդամ էի, նման թեմաներով դասախոսություններ չատ էի լսում: Մի բժիշկ մեզ պատմեց վեներական հիվանդությունների մասին ու խրատեց.

- Հանրատուն մի գնացեք, ձեռնաչարժությամբ մի զբաղվեք և այլն, և այլն:

Վերջապես մի տղա չդիմացավ ու հարցրեց.

- Հապա ի՞նչ անենք:

Բժիշկը պատասխանեց.

- Սառը ջրով լվացեք:



Այդ տարի Տուհուր Ծուեր գյուղն էինք օդափոխություն գնացել: Մեր հայրենակից Տիգրան Ուշխաչյանն էլ էր այնտեղ: Կատակասեր մարդ էր, ամեն առավոտ վաղ ձայն էր տալիս ու մինչև Բիքֆայա քայլում էինք միասին: Եթե ճանապարհին ավտորուս պատահեր, ձեռքով էինք անում, նստում: Մի օր ավտորուսները շատ լիքն էին, չկանգնեցին, ստիպվեցինք ոտքով իջնել քաղաք: Քիչ անց ինքնաշարժով ծանոթներ հանդիպեցին: Կանգ առան, հարցրին, թե ինչու ենք քայլելով գնում: Ասացինք, որ փոխադրամիջոց չկար:

- Մենք մի ազատ տեղ ունենք, մեկիդ կարող ենք վերցնել:

- Տիգրան, դու գնա, դու ինձնից մեծ ես,- զիջեցի ես:

- Մեր խանութն արդեն բաց է, դու շուտ հասիր, որ ձերը բացես,- չհամաձայնվեց նա:

Ի վերջո ես նստեցի:

Այդպես իրար հետ մտերմացանք: Ինչ-որ առիթով, խոսակցության ժամանակ, ինձ առաջարկեց իր հորեղբոր որդու՝ Ղևոնդի դուստր Վերժինի հետ ամուսնանալ:

- Դեռ փոքր է,- ասացի:

- Ի՞նչ նշանակություն ունի,- ասաց:

Ոորհրդակցեցի մորս հետ, նույն կարծիքը հայտնեց.

- Աղջկա փոքրից վնաս չկա:

1941 թվականի նոյեմբերի 9-ին մենք քահանայի օրհնությամբ փոխանակեցինք նշանախոսության մատանիները: Մեր հարաբերությունները խիստ բնական էին, նման չէինք ո՛չ ներկա, ոչ էլ, առավել ևս, հին ժամանակվա նշանված զույգերին: Նախկինում, երբ երիտասարդը նշանվում էր, աղջկա շրջապա-



Մեր նշանախոսությունը:

տը թույլ չէր տալիս, որ ազատ տուն գնա-գա, այդ պատճառով զույգերը թաքուն էին տեսակցում: Կյուրիոսում, հորեղբորս աղջկա՝ Սրբուհու նշանվելուց հետո փեսացուն գաղտնի ճամփաներով, պարտեզների միջով էր մեր տուն գալիս, մայրս էր առիթ ստեղծում, որ նրանք հանդիպեն:

Մեր ամուսնությունը որոշված էր 1942 թվականի հունիսին: Վերժինի հետ եկեղեցի գնացինք, որ արձանագրվենք: Առաջնորդը Արտավազդ Սյուրմեյան արքեպիսկոպոսն էր: Երբ գրանցումն ավարտվեց, սրբազանն ասաց, որ Երուսաղեմի պատրիարքը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս նշանյանն է հյուր եկել ու մեզ սրահ տարավ: Լիբանանի գրեթե բոլոր նշանավոր ազգային գործիչներն այնտեղ էին: Ամաչելով ներս մտանք, ծանոթացանք պատրիարք հորը, որը մեզ օրհնեց: Հուզված տուն վերադարձանք:

Իմ ու Վերժինի պսակադրությունը հունիսի 21-ին՝ ամառային մի տոթ ու խոնավ օր տեղի ունեցավ: Տեր Հուսիկ քահանայի օգնությամբ՝ Ն եղբորս՝ Պողոսի կնքահայրությամբ մեզ պսակեց Սյուրմեյան արքեպիսկոպոսը:

Հյուրերին եկեղեցուց տուն հրավիրեցինք: Պատերազմ էր, լույսերը պետք էր քողարկել, այդ պատճառով բոլոր պատու-



Պսակադրության
արարողությունից
հետո:

Հանները սև վարագույրով ծածկել էինք: Չնայած դրան, ուրախ ժամանակ անցկացրինք: Գիշերվա ժամը 11-ին ես ու Վերժինը դուրս եկանք, լեռնային հյուրանոց գնացինք:

Ամառային առևտրի շրջանն էր, ստիպված մեկ-երկու օրից վերադարձանք, աշխատանքի անցանք: 1943 թվականին ծնվեց մեր անդրանիկ զավակը՝ Մելինեն: Ես չգիտեի, որ երեխայի ծնունդը առնվազն մեկ չաբաթում պետք էր պետական տոմարում գրանցել: Երբ ուշացած ներկայացա, արձանագրողը ասաց, որ 25 ոսկի տուգանք պիտի վճարեմ, բայց իսկույն էլ խորհուրդ տվեց.

- Եթե ավելի ուշ թվականով գրանցեք, տուգանքից կազատվեք:

Այդ ժամանակ մենք ծննդյան տարեդարձները չէինք տոնում, կարևոր էլ չէինք համարում: Դրա համար հեշտությամբ ամիս-ամսաթիվը փոխեցի: Կարծում եմ Մելինեն կների ինձ կամ արդեն ներել է:

Քույրս՝ Մարիամը Ամերիկայում երեք դուստր ունեցավ, սակայն 1944-ին փոքր աղջիկը, 1945-ին, ամուսինը՝ Հովհաննեսը ծանր հիվանդացան, մահացան: Մարիամը չատ էր աղղվել, որպեսզի փոքր-ինչ սփոփվի, 1947-ին այցի եկավ Լիբանան: Քսաներեք տարվա բաժանումից հետո, իհարկե, նա մեզ զգալիորեն փոխված գտավ: Այդ տարի Պհամտուն գյուղը ամառային Հանգստի գնացինք, քրոջս շրջագայության տարանք Լիբանանի լեռները, մեր անդրանիկ որդուն՝ Հարութին կնքեցինք, որը մի քանի ամիս առաջ էր ծնվել: Կնքահայրը եղբայրս էր՝ Պողոսը, կնքամայրը քույրս՝ Մարիամը:

Մեր առևտրական գործերը բավական բարվոք էին, որոշեցինք, որ Պողոսը Ամերիկա մեկնի, ապրանքներն անձամբ գնի: 1948-ին նա ուղևորվեց Ֆրանսիա, Անգլիա, ապա և Ամերիկա: Այդ ժամանակ մաքսատները չհարկվող պաշտարաններ էին տրամադրում: Մեկը գնեցինք: Արտասահմանից ստացված ապրանքները, փոխանակ միանգամից մեծ տուրք վճարելու, այնտեղ էինք պահում ու որը որ պետք լիներ, մուծումները կատարում, փոխադրում էինք խանութ:

1950-ին Պողոսն արդեն վերադարձել էր Բեյրութ, Մովսես Տեր-Գալստյանի, Ատուր Գապագյանի հետ խանութում նստած սուրճ էինք խմում: Անսպասելի զանգահարեց քույրս՝ Հնազանդը և շնորհավորեց, ասաց, որ երկրորդ տղան եմ ունեցել: Իսկույն հիվանդանոց գնացի: Մելինեն արդեն յոթ տարեկան էր, Հարութը՝ երեք: Նորածնի անունը Արա դրեցինք:

Մայրս երկար ժամանակ հիվանդ էր, քաղցկեղ ուներ: Տանջվեց, տառապեց, 1952-ին մահացավ:

Մորս կորստին պսակադրությունները հաջորդեցին՝ Պողոսը Ամերիկայում օրիորդ Արփինե Կարոյանի հետ ամուսնացավ, ընտանիք կազմեց, Հնազանդ քույրս Բեյրութում՝ Երվանդ Չուլճեանի: Վերջինները, սակայն, երջանիկ չեղան՝ 1967-ին փոխադրվեցին Ամերիկա և մինչև Հնազանդի մահը գրեթե բաժանված ապրեցին:

Այդ ընթացքում, Լիբանանում, քրիստոնյաների ու մահմեդականների հարաբերությունները նորից լարվում էին: Մահմեդականներն անընդհատ ձգտում էին կառավարության կազմում գերիշխող դիրք գրավել:

Անորոշ վիճակ էր, հաճախ այնպիսի հանրահավաքներ էին տեղի ունենում, որ ստիպված խանութները փակում, տուն էինք չտալում: 1958-ին ցույցերը կռիվների վերածվեցին, գրեթե հինգ ամիս շարունակվեցին: Նանուլթի ապրանքի մի մասը հավաքեցինք, բարձրացանք լեռնային՝ քրիստոնյա գյուղերը: Ու թեև վտանգավոր էր քաղաք իջնելը, առևտուրը, դրամատների մուրհակները կարգավորելու համար ստիպված էինք լինում իջնել: Մի խոսքով, շատ դժվարություններ հաղթահարեցինք, բայց, բարեբախտաբար, մինչև պատերազմի ավարտը զգալի վնասներ չկրեցինք: Քաղաքական այդ հակամարտությունից հետո Լիբանանը հանդես եկավ՝ «Ոչ հաղթող, ոչ պարտվող» կարգախոսով:

1961-ին Մելինեն ավարտեց Բեյրութի Նշան Փալանճյան ճեմարանը, մեկ տարի հետո՝ Միջազգային քոլեջը: Պողոսը ուսանելու համար նրան իր մոտ՝ Ամերիկա հրավիրեց: Ըստ երևույթին աղջկա ցանկությունն էլ էր նույնը՝ մեկնեց Միացյալ Նահանգներ, ուսումը շարունակեց: Շատ չանցած, պարոն Նուբար Գարազաչյանից նամակ ստացանք՝ Մելինեի ձեռքն էր խնդրում: Անշուշտ նրան անձամբ չէինք ճանաչում, բայց նամակը լավ տպավորություն թողեց, տվեցինք մեր համաձայնությունը: Մի քանի տարի անց Նուբարը հեռագրեց, որ երկվորյակ տղաներ են ունեցել, անունները Շանթ, Սեպուհ են դրել:



Մայրս առաջնեկիս՝
Մելինեի հետ:

Իսկ Լիբանանում ցույցերը շարունակվում էին: Պողոսին գրեցի, որ քույրիկիս՝ Մարիամի միջոցով մեզ համար հրավիրագրեր պատրաստի: Եթե դրությունն անտանելի դառնար, ուրիշ ճար չունենիք, երկրից պիտի հեռանայինք: Նրանք ուղարկել էին հրավիրագիրը, բայց ծրարի վրա մեր այն տան հասցեն էին գրել, որտեղից վաղուց փոխադրվել էինք: Բարեբախտաբար մի հայ խանութպան փոստատարին ասել էր, որ ճանաչում է մեզ, նամակը վերցրել, որդու միջոցով ինձ էր հասցրել: Այլևս ընտրություն չկար՝ Լիբանանի անորոշ վիճակը, առևտրի դանդաղելը արագացրին մեր որոշումը: Մի որդիս՝ Հարութն արդեն ավարտել էր սուրբ Նշան վարժարանի իններորդ դասարանը, Միջազգային քոլեջն ու Փրանսիական բակալորիայի վկայականն ստանալուց հետո աշխատում էր, որ դրամ խնայի, Լոնդոն գնա, ուսումը շարունակի: Արան էլ էր նույն ճեմարանն ավարտել, նա էլ էր ուսումը շարունակելու մասին մտածում:



...դիմիկ քաղաքացիական զինուորական
...համար 1942 թվականի հունիսի 1-ին
...համար 1942 թվականի հունիսի 1-ին
...համար 1942 թվականի հունիսի 1-ին

ՊԱՌԻՍ Ե

ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

...համար 1942 թվականի հունիսի 1-ին
...համար 1942 թվականի հունիսի 1-ին
...համար 1942 թվականի հունիսի 1-ին
...համար 1942 թվականի հունիսի 1-ին

...համար 1942 թվականի հունիսի 1-ին
...համար 1942 թվականի հունիսի 1-ին
...համար 1942 թվականի հունիսի 1-ին
...համար 1942 թվականի հունիսի 1-ին



Վերջին գաղթը

Ի վերջո մեկնելու որոշումը կայացրինք՝ անհրաժեշտ քննություններն ու ձևակերպություններն ավարտելուց հետո թույլտվության համար դիմեցինք Միացյալ Նահանգների դեսպանությանը: Երբ իմացան դերձակ եմ, վստահեցրին, որ աշխատանք գտնելու դժվարություն չեմ ունենա: Այդ պատճառով թերևս արտոնություն հեշտությամբ տվեցին: Տան գույքերը և կարասիները, որոնք մեզ հետ չէինք տանելու, որքան որ կարողացանք վաճառեցինք կամ էլ նվիրեցինք: Իմ մեկնելուց հետո խանութում Հարութը պիտի աշխատեր, մինչև ես վերադառնայի ու վաճառեի:

1969-ի օգոստոսի 21-ին հասանք Ամերիկա: Օդանավակայանում իրենց երկվորյակ զավակներով մեզ դիմավորելու էին եկել Մելինեն ու Նուբարը: Շանթն ու Սեպուհը այդ ժամանակ երկու տարեկան էին, ծաղկեփնջերով մեզ ընդառաջ նետվեցին: Ես խանութս վաճառելու համար Լիբանան չվերադարձա՞մ, Արան համալսարան ընդունվեց, Վերժինը մեկնեց Մայամի, որ հիվանդ մորաքրոջը՝ Վերոնին խնամի: Այդպես մեր ընտանիքը նորից ցիրուցան եղավ:



Դեռևս Բեյրութում, նախքան մեր՝ Միացյալ Նահանգներ տեղափոխվելը, Հարութն ասել էր, որ որոշել է նշանվել: Ես արդեն գիտեի, որ նա օրիորդ Անի Թերզյանի հետ մտերմական կա-

պեր ունի: Նրանց ընտանիքը մեր ներքևի հարկում էր ապրում, երբեմն պատուհանից-պատուհան ձգված թել էի տեսնում, որի միջոցով ջահելները հաղորդակցվում էին իրար հետ: Ես տղայիս անկեղծորեն ասացի.

- Քո նշանվելուն դեմ չեմ, բայց հարանցուն այստեղ, դու՝ Լոնդոնում, ինչպե՞ս պիտի ուսանես: Հեռավորությունը չի՞ խանգարի:

Պարզվեց, նրանք այդ մասին մտածել են: Անին որոշել էր ինքնաթիռի ուղեկցորդուհի դառնալ, որ հնարավորություն ունենա երբեմն Լոնդոն գնալ, նշանածին տեսնել:

Երբ խանութը վաճառելու համար Բեյրութ վերադարձա, օդանավակայանում ինձ դիմավորեցին Վերժինի քույրն ու փեսան՝ Եպրաքսին ու Միհրանը: Ես նրանց տանը մնացի, որովհետև Հարութն արդեն պատրաստվում էր Լոնդոն մեկնել: Մի քանի օրից մեկնեց: Ուսումնական ապրանքները հանձնեցի դրամագլխից շատ ցածր գնով, մինչև 1970-ի մարտը իրավունքս էլ վաճառեցի ու Անգլիա ուղևորվեցի՝ Հարութին տեսնելու: Երկու օր մոտը մնալուց հետո Ամերիկա վերադարձա:

Նոր կյանքն ու աշխատանքը

Ապրիլին, երբ հասա Նյու Ջերսի, Վերժինն ու Արան արդեն տուն էին վարձել: 1973-ին ծնվեց Մելինեի դուստրը՝ Լորին: Ծնունդով Արան ավարտեց համալսարանը: Հարութը Անգլիայում ուսանելու ընթացքում ամուսնացել, տղա էր ունեցել: Անունը դրել էին Րաֆֆի:

Համալսարանն ավարտելուց հետո նա պարտավոր էր ընտանիքով հեռանալ Անգլիայից: Մեզ հարցրեց, թե որտեղ հաստատվի, խորհուրդ տվեցինք Միացյալ Նահանգներ գալ: Մելինեն պատրաստեց հրավիրագրերը, նրանք եկան և հիմնական մնալու իրավունք ստացան: Մեր ընտանիքը կրկին միացավ: Վերջնականապես Ամերիկա տեղափոխվելու ժամանակ ես ար-

դեն հանգստի անցնելու տարիքի էի: Կարծում եմ ծնվել եմ 1905 թվականին: Ցեղասպանությունից տարիներին մեր ընտանեկան բոլոր փաստաթղթերն ու գրառումները կամ կոդակներին կամ կորան: Զինադադարից հետո, մինչև 1925 թվականը, արաբական երկրներում ապաստանած հայ գաղթականները քաղաքացիություն չունեին, Նանսենի ջանքերով Ազգերի լիգան որոշում կայացրեց, որ իրենց բնակված երկրի հպատակությունն ընդունեն: Այդ ժամանակ Լիբանանը ֆրանսիական ազդեցության ոլորտում էր, ինքնություն վկայական ստանալու համար երիտասարդները արձանագրվում, բայց և վախենում էին, որ ֆրանսիացիները բանակ կգորակոչեն: Ծառերը բեղ-մորուք էին թողնում, որ տարիքներից մեծ երևան: Իմ պարագայում մայրս հակառակն էր արել՝ 6 տարով փոքր էր արձանագրել, չմտածելով, որ երեխան որքան էլ փոքր լինի, վերջիվերջո մեծանում է: Ահա այդ պատճառով, երբ Միացյալ Նահանգներ տեղափոխվեցի, չնայած 60-ն անց էի, շատ չուտ կարողացա աշխատանք գտնել: Իհարկե, լեզվի խնդիրը կար: Թեև որբանոցում անգլերեն բավական սովորել էի, Լիբանանում, մեր ապրած տարիներին գործածական օտար լեզուն ֆրանսերենն էր, ֆրանսերեն ավելի լավ գիտեի:

Նախ, մի վաճառատան մեջ հագուստներ նեղացնելու ու կարճացնելու գործ գտա: Ես Լիբանանում վարպետ, վարպետների ընկերակցություն անդամ էի, բայց ուրիշ ելք չունեի: Վաճառատան դերձակները խտալացի՝ հայր ու երկու որդի էին, ինձից սովորում, հետո պարծենում էին.

- Տեսնո՞ւմ ես ինչ մասնագետ ենք:

Անընդհատ խտալացիների միջավայրում լինելու պատճառով անգլերեն լավ չսովորեցի: Ութ-տասը տարի համբերատարություն միջանկյալ, մինչև ծերություն թոշակի անցնելու իրավունք ստացա:

Լիբանանում ՀՅԴ անդամ էի, հետո հանձնարարական էի բերել, այնպես որ նոր երկրում ինձ մեկուսացած չզգացի:



Իմ գերդաստանը (Հակոբ Ժամկոչյանի վերջին լուսանկարը՝ սեպտեմբեր, 2002 թ.-ի սմբ.):

Կորուստներն ու ծնունդները

Հարութը Ամերիկա փոխադրված տարին կորցրեց երկու ամսական տղային՝ Հակոբին: 1982-ին մահացավ Հնազանդը՝ քաղցկեղ, հիշողության միացնում ուներ: Մի քանի տարի անց կյանքից հեռացավ նաև Մարիամ քույրս, նա գլխուղեղի՝ երակային արյունահոսություն էր տարել, անդամալույծ դարձել, անկողնին զամված տառապում էր:

1980-ին ծնվեց Թալինը, 1982-ին՝ Սարո Թոռնիկս: 1987-ին Արան ամուսնացավ Կարմեն Գորտերոյի հետ, 1990-ին ծնվեց Ջենիֆր-Վերժինը: 1989-ին երկու մեծ թոռներս՝ Շանթն ու Սեպուհը ինժեների տիտղոսով ավարտեցին Համալսարանը, որից հետո, 1991-ին, Շանթը ամուսնացավ Մերի Գրիգորյանի հետ: Ապա մյուս թոռնիկս՝ Րաֆֆին ավարտեց Համալսարանը, ինքն էլ ինժեներ դարձավ, 1993-ին ամուսնացավ Ալին Տերյանի հետ:

Այս տարի Լորին ավարտում է Համալսարանը, Թալինը չաբունակում է սովորել Հայ Սքուլում, Սարոն՝ Միթլ Սքուլում: Ջենիֆր-Վերժինն էլ նախադպրոցականի կրթարանի վերջին տարին է բոլորում:



Հաճախ, երբ հետ եմ նայում անցած 97 տարիներին, դժվարությամբ եմ վերապրում բոլոր տառապանքներն ու զրկանքները, որոնք վաղ մանկությունից հաղթահարել եմ: Թուրքերը փորձեցին բնաջնջել մեր գերդաստանը, 40 հոգուց հազիվ մի քանիսս փրկվեցինք, բայց հիմա, փառք Տիրոջը, ես չատ երջանիկ եմ իմ կնոջով, երեք զավակներով, յոթը թոռներով, յոթը ծոռներով, հարսներով ու փեսայով, որոնց մշտական հարգանքը, հոգատարությունն եմ վայելում:

Թուրքը չկարողացավ հասնել իր նպատակին:

2002 թ., Հազլետ



Հայրենիքում:



Ամուսնական
տանգո:



Ես և կրտսեր որդիս՝ Արան:



Հորեղանական
տոբլթը:



Ընծայագիր Թոռնուհուս՝
Ջենիֆր-Վերթինին:



Իմ ընտանիքը:



Կրտսեր եղբորս՝ Պողոսի հետ:



Ցեղասպանության վերապրողների մեծարումը:

ՄԵԼԻՆԵ ԳԱՐԱԳԱՇՅԱՆ
ԾԱՂԿԱՆԱԽՇՈՎ ՏՈՒՆԸ

Որպես վերջաբան

Հայրս, ծերանալուց հետո հատկապես, չափազանց շատ էր պատմում իր ծնողների և ընդհանրապես ծննդավայրի՝ Կյուրինի մասին: 1980-ական թվականներին դոկտոր Մայքլ Հակոբյանը՝ «Հայ տեսաերիզի հիմնադրամ»-ի տնօրենը, հորս հետ հարցազրույց ունեցավ և տարագրության պատմության մի դրվագը զետեղեց իր «Հայկական ցեղասպանությունը» տեսաերիզում: 1985-ին Զորյան ինստիտուտի մի աշխատակից ևս հորս նկարահանեց, հուշերը հետագա հետազոտությունների համար արխիվային վավերագրերին կցեց: Իսկ 1990-ից սկսած, տեղի տալով մորս հորդորներին, անձամբ գրի առավ իր հուշերը:

Հայրիկիս պատմությունները բազմիցս լսելը, ինչպես նաև գրավոր հուշերը մեքենագրելը այնքան էին տպավորել ինձ, որ 1997-ի հուլիսին որոշեցի Կյուրին գնալ, նրան իր ծննդավայրի լուսանկարներն ու հիշատակները բերել: Ամերիկյան ճամփորդական մի խմբով ուղևորվեցի Թուրքիա: Երբ Իզմիր հասանք, որտեղից 1922-ին բռնի արտաքսել էին քրիստոնյաներին, որոնց թվում և մայրական տատիս՝ Արուսյակ Արմաղանյանին, ինչպես նաև սկեսուրիս՝ Գայանե Հայրապետյանին և ընտանիքին, մեր խմբի ընդհանուր ղեկավարին պատմեցի հորս անցյալը, նկարագրեցի, թե ինչքան է կարոտում ծննդավայրը, ինչպես է ամեն օր մանկության մասին խոսում (որն, իհարկե, իրականություն էր): Ապա մի վարորդ խնդրեցի, որպեսզի ինձ թեկուզ մի օրով Կապադովկիայից Կյուրին տանի: Ես ուզում էի լուսանկարել իմ Հայրական տունը, վերադառնալուց հետո ներկա Կյուրի-նի մասին պատմել: Հաջորդ օրը ընդհանուր ղեկավարը տեղե-

կացրեց, որ թույլտվություն ստանալու համար լուսահեռագիր է ուղարկել Անկարա, հետո հետս վեճի բռնվեց, ասաց, որ 1922-ին տեղի ունեցածը ոչ թե ջարդ ու բռնազաղթ, այլ «ժողովուրդների փոխանակություն» է եղել:

Մեր խումբը Անկարա մի ուրիշ ուղեկցորդուհի առաջնորդեց: Հորս մասին նրան էլ պատմեցի: Նա ըստ երևույթին ավելի զգայուն կին էր, ասաց.

– Հայրիկիդ անցյալը մեր երկրի պատմության մոայլ էջերից մեկն է: Ասա իրեն, որ ես անձամբ հրավիրում եմ Թուրքիա: Եթե ինքնաթիռով հասնի Անկարա, ամեն պայմաններ կապահովեմ, անպայման Կյուրին կտանեմ:

Ավելի ուշ, Կապադովկիայում ուղեկցորդուհին մի վարորդի հանձնարարեց, որ ինձ Կյուրին առաջնորդի: Ես մեկ օրով բաժանվեցի մեր խմբից: Վարորդը ներկայացավ առավոտյան ժամը 6-ին: Բարեբախտաբար ֆրանսերեն խոսում էր: Ես թուրքերեն չգիտեմ, սակայն երբ Կյուրին հասանք, ժողովրդի խոսակցության առնվազն քառորդը հասկանում էի: Դա և՛ լավ էր, և՛ վատ, որովհետև որոշ բաներ սխալ ընկալեցի, իզուր վախեցա:

Ճամփան հարթ, սալահատակված էր: Վարորդի ասելով՝ Թուրքիայի նախագահի համաձայնությամբ մինչև Մալաթիա ամերիկացիներն էին վերանորոգել, որովհետև այնտեղ ռազմական խարխալայան ունեին:

Հասանք Կեսարիա (այժմ՝ Կայսերի): Քանի որ ժամանակին այդ նույն վայրում հայեր էին բնակվել, քաղաքակրթություն ստեղծել, անընդհատ աջ ու ձախ էի նայում, որպեսզի հայկական որևէ հիշատակ, խորհրդանիշ գտնեմ:

Ինքնաշարժն սկսեց դեպի վեր, սարերը բարձանալ: Շրջապատի բնությունը, լեռկ լեռներն ինձ հիչեցնում էին Հայաստանը՝ հատկապես Երևանից Գյումրի տանող ճանապարհը: Տխրությամբ մտածում էի՝ այդ ամայի հովիտներում, որտեղ պատսպարվելու համար մի ծառ անգամ չկար, ծառավին, կիզիչ արևին ինչպե՞ս են դիմացել ոտաբորիկ հայ գաղթականները:

Ճանապարհը հետզհետե թեքվեց, կանաչապատ ձորակում իմ հայացքի դիմաց մի գյուղաքաղաք սփռվեց: Մեր աջ կողմում ինչ-որ գետ էր հոսում, որը Շուղուլը կամ Թոքման պիտի լիներ: Վարորդը ծանոթ չէր տեղանքին, չկարողացավ որոշակի բան ասել: Սակայն, ըստ հորս նկարագրություն, գյուղաքաղաքը կյուրինն էր: Սիրտս սկսեց արագ բաբախել: Լարված կարդում էի ճամփեզրի մակագրությունները, որպեսզի հայրիկիս հիշատակած որևէ բնակավայր իմ ուղադրությունից չվրիպի: Ուզում էի հատկապես այն ճանապարհը գտնել, որով հայրս էր սայլով անցել իր մահամերձ հոր հետ: Գյուղերի, քաղաքների անունները, սակայն, ծանոթ չէին կամ փոխված էին:

Վերջապես ճանապարհացույցն ազդարարեց՝ «Կյուրին, բնակչությունը՝ 9890»: Հասկանալի է՝ գրված էր թուրքերեն: Իսկույն հիշեցի հորաքրոջս սիրած երգը.

Թուզեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն,
Տեսնեի այն առուն,
Կարոտով ես անհուն,
Ուր ամեն մի գարուն...

Երբ ի վերջո կյուրին մտանք, մտածում էի նախ կտեսնեմ այն թաղը, որտեղ հորս պատմածով կաթոլիկ հայերն էին ապրում: Բոլոր տները, սակայն, նոր էին: Ճանապարհի ձախ կողմում հին, կիսաքանդ կամուրջ երևաց: Չէ՞ր կարող Թոքմա գետի կամուրջը լինել, որը Սեբաստիա էր տանում: Հայրս պատմել էր, որ իրենց տոհմական՝ Ժամկոչյանների տունը այդ ճանապարհի ճիշտ դիմացն էր, իսկ ձախ կողմում բարձր լեռներ էին:

Հանկարծ անդրադարձա, որ հորս հիշած ու նկարագրած կյուրինը 82 տարի առաջ է գոյություն ունեցել, անհնարին է գտնել այն քաղաքը, որն իմ նախնիները թողել են 1915 թվականին: Հուսահատությունը համակեց ինձ, տազնապեցի՝ միթե՞ չեմ տեսնելու մեր պապենական տունը:

Հասանք կենտրոն, որտեղ ճաշարան կար: Վարորդը հարցրեց, թե կուզեի՞ նախաճաշել: Իհարկե, դեռ ոչինչ չէի կերել: Տեղավորվելուն պես սպասարկողին ասացի, թե ինչու եմ եկել: Մեզ մի երիտասարդ մոտեցավ և երբ տեսավ հորս գծագիրը, իմացավ, որ Ժամկոչյանների տունն եմ փնտրում, ասաց.

- Հին հայկական թաղում է, ես էլ եմ այնտեղ ապրում, ձեզ կտանեմ:

Նստեց մեր ինքնաշարժը, որ ուղեկցի: Ճանապարհին խնդրեց կանգնեցնել, ինչ-որ խանութ մտավ: Երկար, թերևս 25 րոպե սպասեցինք: Ի վերջո դուրս եկավ երկու տղամարդկանց հետ, որոնք մի ուրիշ ինքնաշարժ նստեցին:

Վարորդս հետևեց նրանց: Անցանք մի գետի վրայով, որը Թոքման պիտի լիներ: Քիչ անց մեր առջևի ինքնաշարժը աջ թեքվեց, փոքր կամուրջի վրայով մի փողոց մտավ, որը գետին զուգահեռ էր: Չանցած 200 մետր աջ կողմում տեսա մեր պապենական տունը, այնպիսին, ինչպիսին նկարագրել էր հայրս: Առջևի ինքնաշարժն ու վարորդը կարծես հասկացան ինձ, կանգ առան: Ցած իջանք:

Տունը երկհարկանի էր, կողք-կողքի երեք մասնաշենք ուներ: Առաջինը, որտեղ հորս հորեղբայրն էր ապրել, փլված պատուհաններով, անբնակ էր թվում: Երկրորդը, որն ամենայն հավանականությամբ իմ հայրական օջախն էր, դարձյալ կիսաքանդ էր, սակայն կարծես լքված չէր, որովհետև վերևի հարկի պատուհանից մի փոքրիկ աղջկա գլուխ երևաց: Մուտքը փողոցի կողմից էր, սակայն, չգտես ինչու, չէր օգտագործվում: Լավ վիճակում էր երրորդ՝ հորս մյուս հորեղբոր բնակարանը: Քարե մի պատ ու մի կամարաձև մուտք երեք մասնաբաժինները միացնում, երկար շենքի տպավորություն էին ստեղծում: Տան դիմաց բարձր բարդիների անտառակն էր, որը ձգվում էր մինչև գետը: Ուրեմն այս գետն է մի օր հորդել, թփրտացող ձկներ չալրտել ափ: Հայրս ուրախացել, փորձել է հավաքել, բայց որտեղից որտեղ հայտնվել է հորեղբայրը, վրան բարկացել.

- Ի՞նչ ես անում այստեղ, չո՛ւտ տուն գնա:

Մոտեցա մուտքին ու կամարի տակ, ճիշտ դռան վրա նկատեցի երկու տերևով ծաղկի քանդակ, որը մեր ավանդական զարդանախչերն էր հիշեցնում: Այն առաջին հայկական վկայությունն էր, որ ես տեսա Կյուրինում, երկրորդը եղավ Մայր եկեղեցու գմբեթը: Եկեղեցին դեռևս 1923-ին էր մղկիթի վերածվել:

Տան դիմաց կանգ առա ու հորդացող արցունքներս չկարողանալով զսպել, սկսեցի աջ ու ձախ լուսանկարել: Թուրքերը ապշած, չփոթված ինձ էին նայում: Այն երկու երիտասարդները, որոնք ճանապարհին էին մեզ միացել, նստեցին իրենց ինքնաշարժն ու արագ հեռացան: Ես այլևս նրանց չտեսա:

Մեզ հետ մնացած թուրքը կամարից ներս առաջնորդեց: Մտանք փոքրիկ բակը, որի ձախ կողմում մի հարկանի կառույց կար: Դրսի պատը ես դեռևս փողոցից էի տեսել: «Ըստ երևույթին թոնրատունն է», - անցավ մտքովս:

Բակի դիմաց մետաղե աստիճաններ կային, որոնք տանում էին տուն: Մուտքի մոտ միջին տարիքի մի գեղադեմ թրքուհի մեզ էր սպասում:

Վերև հրավիրեց: Աստիճաններից բարձրանալիս մտքիս, ավելի ճիշտ հոգուս մեջ, արձագանքում էր հորս ձայնը: Նա ասում էր, որ առաջին հարկում անասուն էին պահում, որ տաքությունը երկրորդ հարկ թափանցի:

Հիշեցի նաև այն կովը, որը մեծ մայրս բռնազաղթից առաջ չէր ուզել վաճառել, քանի որ ընտանիքի անդամն էր համարել: Խեղճ կինը թաց աչքերով կովը վստահում է հարևանին՝ էքքեչ էֆենդիին, խնդրում լավ պահել, իսկ թուրքն ասում է. «Քույրս, լաց մի լինի, դռան առջևի հոսող ջրով ղեմքդ լվա, որովհետև այսպիսի ջուր ուրիշ տեղ չես գտնելու»:

Հուզումով մոտեցա փայտե դռանն ու նկատեցի երկաթե խոշոր բանալին: Երևի հին դուռն էր, հորս հորեղբոր բանալին: Ավելի հուզվեցի, բռնեցի բանալին ու պաղ մետաղից ջերմություն զգացի: Լուսանկարեցի:



Ներս, գավիթ մտանք: Աջ կողմում մի ընդարձակ սրահ կար, որը հյուրասենյակի տպավորություն էր թողնում՝ թախտերով էր կահավորված, գորգապատ էր: Գավիթի դիմաց, վարագույրի հետևը խոհանոցն էր, ձախում՝ երկու ննջասենյակները: Թրքուհին ներողություն խնդրեց, որ անկողինները հարդարված չեն: Զարմանալիորեն ես հասկանում էի նրան, որովհետև օգտագործած բառերը հիշեցնում էին մեծ մորս խոսած Կյուրինի բարբառը:

Մոտեցա պատուհանին, պարտեզ էր նայում: Պատուհանի գոգին մի մեծ ափսե ծիրանի անուշ էր դրված, որ արևի տաքությունից թանձրանա ու համովանա: Նույնը մեծ մայրս էր անում Լիրանանի մեր հին տանը: Հայրս անընդհատ գովում էր իրենց պտղատու ծառերը, մանավանդ՝ ծիրանենիներն ու թթենիները:

Իջանք պարտեզ, որտեղ բանջարեղեն, վառ վարդեր կային: Հորս պատմելով, նույն բաները տատս էր ցանում: Բարձրացանք մի քանի աստիճան, մտանք այգի, ու ես տեսա մի մեծ ընկուղենի, ինչպես նաև ծիրանենիներ ու թթենիներ, որոնք չարեշար ձգվում էին մինչև քարե ցանկապատը: Երիտասարդ թուր-

քր, որը մեզ հետ տուն չէր մտել, անընդհատ պտղատու ծառերն էր ցույց տալիս, ոգևորված ինչ-որ բան էր հարցնում: Ես չէի հասկանում, բայց գլխով «այո, այո» էի ասում: Բակից դիտեցի հորս մասնաշենքը: Այն հաստատ բնակեցված էր, քանի որ քան ցանկապատի վրա ափսեով ծիրանի անուշ էր դրված:

Հանկարծ նկատեցի ոլորապտույտ առվակը, որը հոսում էր այգու եզրով, քարերի արանքում խշխշում: Ցանկապատը կիսափուլ էր: Կյուրիների վերականգնված պատերը տարբերվում էին հնից՝ հայերի շինածից:

Կռացա, առվակի ջրով լցրի ամերիկյան հանքային ջրի շիշը, որը հատուկ այդ նպատակի համար էի հետս Նյու Ջերսիից բերել: Այնքան ազդված էի, որ խոսել չէի կարողանում:

Թրքուհին ցանկապատի մոտ մի փոքրիկ տնակ ցույց տվեց, ասաց.

- Հայի արտաքինոց է, մենք չենք օգտագործում:

Ցանկապատի կողքով քայլելիս ուշադրությունս գրավեց հարևանի այգին, որը, ըստ հորս բացատրություն, Թրվանտա հորաքույրինը պիտի լիներ: Նա հորս հորեղբոր որդու աղջիկն էր, իրենց գերդաստանի միակ վերապրողը: Լիբանանում մեր ընտանիքի հետ շատ սերտ հարաբերություններ ուներ:

Ուզեցի հորաքրոջս այգին էլ տեսնել: Երբ մոտեցանք թթենուն, երիտասարդ թուրքը, որն ինձնից չէր բաժանվում, կանգ առավ ու ցույց տալով ծառի արմատները, ավելի ոգևորված կրկնեց այն խոսքերը, որոնց իմաստը հենց սկզբից չէի հասկացել: Վարորդս, ճարահատ, ֆրանսերեն թարգմանեց.

- Նա հարցնում է, թե ո՞ր թթի ծառի տակ են պահված հորդ ոսկիները:

Ապշեցի, ես ինչի՞ մասին էի մտածում, իրենք՝ ինչի:

- Հայրս ոսկի չուներ, - ասացի, ու նույն պահին երիտասարդ թուրքն իմ նկատմամբ կորցրեց հետաքրքրությունը:

Տանտիրուհին ինձ բակ առաջնորդեց, ցույց տվեց ցախանոցն ու ասաց.

- Այստեղ հայերի ձմեռային թոնիրն էր, քանդեցինք, հիմա մենք մերը՝ Թրքականն ունենք:

Երբ մտա բանջարանոց ու մի ափ հող վերցնելով, տոպրակի մեջ լցրի, Թրքուհին այլայլվեց, անմիջապես մի վարդ քաղեց, քնքշությամբ երկարեց ինձ: Հետո արագ-արագ լողիկ, վարունգ, կանաչ պղպեղ հավաքեց, գոգս լցրեց: Անդրադարձա, որ նախանձի չար աչքից վախեցավ, մտածեց բանջարանոցը կչորանա: Նույնիսկ հարցրեց.

- Ուրիշ որևէ բան չէի՞ք ուղի:

- Շատ շնորհակալ կլինեմ, - ասացի, - եթե ձեր եփած ծիրանի անուշից մի քիչ տաք, հորս տանեմ:

Թրքուհին ուրախացավ, շտապ տուն գնաց, փակ ամանով ծիրանի անուշ բերեց: Այն ինձ համար շատ արժեքավոր նվեր էր, որովհետև արդեն պատկերացնում էի ապրումները, որ ունենալու էր հայրս:

Մուտքի կամարի մոտ ես Թրքուհուն լուսանկարեցի, վարորդս՝ ինձ ու հրաժեշտ տվեցի իմ հայրական տանը:

Երիտասարդ թուրքը հեռացավ, իսկ ես ու վարորդս գնացինք նախկին Մայր եկեղեցին: Մուտքի արձանագրությունն էլ էր վկայում, որ 1923-ին է մզկիթի վերածվել: Ներս մտան: Գավիթը, հաստ պատերն ու լայն պատուհանները այնպիսին էին, ինչպիսին նկարագրել էր հայրս: Նա հիշում էր երեխա եղած ժամանակ պատուհանի գոգին նստելն ու հատկապես հունիսի այն ահավոր օրը, երբ Թուրքական կառավարությունը 1500 հայ տղամարդու ձերբակալել ու բանտարկել է այս եկեղեցում: Իսկապես, Մայր եկեղեցին՝ ներկա մզկիթը, այդքան մարդ տեղավորելու չափ ընդարձակ էր: Ես զուր փնտրեցի այն պատը, ուր գլխավոր խորանը պետք է եղած լիներ: Սյուները նույնքան ամրակուռ էին (ինչպես հայրս էր նկարագրել), բայց իսլամական տեսք էին ստացել: Ուզեցի խաչակնքել, համարձակվեցի, մանավանդ որ ի վերջո մզկիթում էի գտնվում: Մտքումս աղոթեցի 1915-ի նահատակների հոգիների համար:

Մզկիթի դիմացի երկհարկանի շենքն ըստ երևույթին նախկին Առաջնորդարանն էր: Այժմ առաջին հարկը սրճարան էին դարձրել՝ սաղարթախիտ, ծեր ծառի ստվերում մի քանի թուրքեր նստած զրուցում էին: Քիչ այն կողմ կաթողիկե եկեղեցին էր, որն ինչպես ասացին արդեն 25 տարի է լքված էր: Ետևում հիթիթական քարայրներն էին, ավելի ներքևում հին մզկիթը, որի ջուրը ժամանակին թուրքերը Մայր եկեղեցուց էին խողովակներով տարել: Մզկիթի դիմաց, կողք-կողքի խանութներ կային: Անդրադարձա, որ դրանցից մեկը ժամանակին մեծ հորս է պատկանել: Մտա մի պատահական կրպակ, որ հայրիկիս համար չոր միդգ գնեմ: Առիթից օգտվեցի, վաճառողին հարցրի էքքեչ էֆէնտիի մասին, ում, մեծ մայրս, գաղթից առաջ իր կովն էր վստահել: խանութպանը ձայնեց.

- Ահա՛, ձեր հին հայերից մեկը եկավ, նրան հարցրեք:

Դեպի դուռը դարձա՝ ներս էր մտնում անթացուպին հենված, գլուխը հպարտ, բարձր պահած տարիքոտ մի մարդ: Վաճառողը ներկայացրեց ինձ: Ծերունու աչքերն արցունքոտվեցին: Ու մինչ խանութպանն ու վարորդս սուրճն էին եփում, կամաց հարցրի.

- Հայերեն գիտե՞ս:

Քաշվելով պատասխանեց.

- Մի քիչ:

- Անունդ ի՞նչ է:

- Սարո օղլու:

Ենթադրեցի, որ ժամանակին թերևս Սարոյան է եղել:

Նա պատմեց, թե ինչպես 1915-ին հորը մյուս հայ երիտասարդների հետ զինվոր են տարել: Ռմբակոծության ժամանակ ընկել է մեռելների մեջ, հետո վեր է կացել, հետ՝ Կյուրին եկել: Մի թուրք ընտանիք է պահել, խնամել նրան, և որոշ ժամանակ անց ամուսնացել, ունեցել է Սարո օղլուին:

Ծերունին ինձ տուն հրավիրեց: Մենք ինքնաշարժ նստեցինք, կրկին հայկական թաղը մտանք, անցանք Զախձորի կա-

մրջով, հողե ճանապարհով բլուր բարձրացանք: Սարո օղլուի նորակառույց տունը գրեթե գազաթին էր: Նա մեզ ծանոթացրեց իր համեստ տիկնոջ հետ: Ես պատշգամբ ելա, դիտեցի փարթած՝ կանաչ լեռներով շրջապատված այգիները, որոնք ոչ այնքան հեռավոր անցյալում հայերի էին պատկանել: Արդյոք ո՞րն էր մերը, Զեյթունցյաններինը, որոնց տղայի՝ Հովհաննեսի հետ ամուսնացել էր հորաքույրս՝ Մարիամը, Բոստոն մեկնել:

Սարո օղլուն ցույց տվեց պտղատու ծառերի իր ընդարձակ այգիները, ասաց, որ երկու հայ եղբայրներից է գնել, որոնք 25 տարի առաջ են հեռացել Կյուրինից: Նա հպարտ էր իր անցեցած բերքով: Մենք պարտեզ իջանք, սուրճ խմեցինք: Ես խոսք բացեցի Տերենտե գյուղի ջերմուկների մասին, որոնց ձկները, ըստ հորս, լիզելով բուժում էին հիվանդների վերքերը: Սարո օղլուի կինը հաստատեց հայրիկիս ասածները, պատմեց, թե ջերմուկի ջրերը քանի հաշմանդամների, նույնիսկ անկարների են ոտքի հանել: Հիմա հասկացա, թե ինչու հիվանդ մեծ հորս սայլով ուզել են մինչև Տերենտե հասցնել, բայց խեղճը չի դիմացել ճանապարհին մեջքի վերքից մահացել է:

«Հին հայերից» մեկին գտնելը մեծ գոհունակություն պատճառեց ինձ: Թվում էր, ինքն էլ է ուրախ, անընդհատ կրկնում էր.

- Կյուրին եմ հրավիրում ձեր ամբողջ ընտանիքին: Եկեք, իմ տանը մինչև 24 հոգի հանգիստ կտեղավորվեք: Ամեն օր տաքսի կը վարձեմ, որ շուկա գնաք, զբոսնեք:

Երբ ցանկություն հայտնեցի ուրիշ հայերի տներ էլ տեսնել, ընկերացավ ինձ: Մենք դարձյալ անցանք Զախձորի վրայով, մտանք նախկին մեծահարուստների թաղը: Սարո օղլուն ինձ մի բակ առաջնորդեց, որը ծառերով ու ծաղիկներով էր զարդարված: Որթատունկի ստվերում նստեցինք: Տանտերը՝ բարձրահասակ, թխադեմ, միջին տարիքի տղամարդ էր, կնոջը հրահանգեց, որ մեզ թան բերի: Իսկ ինքը խոսքի բռնվեց վարորդիս հետ, հարցրեց, թե մեր ոսկիները փնտրելո՞ւ էի եկել: Երբ իմացավ, որ իմ նպատակը միմիայն հորս տունը տեսնելը, լուսանկարելը, հե-

տա մի բուռ հող, մի պուտ ջուր տանելն է, զարմանքից բերանը բաց մնաց, բացականչեց.

– Յա, Ալլահ...

Ես նկարահանեցի, միաժամանակ ձայնագրեցի նրանց խոսակցությունը:

Թուրքը ավելի անկեղծացավ, հպարտ-հպարտ պատմեց, որ իր տունը մինչև 1915-ը Գոչունյաններին է պատկանել, հայրը գնել է, երբ օրենք է հրապարակվել, որ Կյուրինից բացակայած ու 5 տարուց չվերադարձած հայերը կորցնելու են սեփականատիրական բոլոր իրավունքները, նրանց ունեցվածքը աճուրդի է հանվելու, որ ամեն թուրք կարողանա հարմար գնով գնել:

Այս մանրամասներին անդրադառնալիս թուրքի լայն բացված աչքերը փայլվում էին, ինքն իրեն լավ էր զգում, որ հայի տուն է զբաղեցրել, կարողությունը տեր դարձել:

Վերջապես շրջվեց ինձ, ուզեց իմանալ, թե Ամերիկայում ինչո՞վ եմ զբաղվում, հարուստ համարվո՞ւմ եմ: Վարորդս բացատրեց, որ մեկ օր զբաղեցնելու համար ես իրեն իր չորս ամսականը՝ 200 դոլար եմ վճարել:

Մտքումս, ամբողջ էությունս ես էլ պատասխանեցի նրան. «Ամեն դեպքում մենք՝ Կյուրինցի հայերս չատ ավելի հարուստ ենք, քան դուք: Դուք միայն մեր թողածն եք վայելում, փլչող տներն անգամ վերանորոգել չեք կարողանում, վարպետ չունեք: Իսկ մենք, չնայած այդքան զոհեր տվինք, տանջվեցինք, տառապեցինք, տարազիր դարձանք, բայց կարողացանք վերապրել, հայկական հզոր Սփյուռքը ստեղծել: Հիմա անգամ աշխարհի զարգացած երկրներում այնպիսի դիրքի ենք հասել, որ չեք կարող պատկերացնել, նույնիսկ երևակայել»:

Փողոց ելանք: Ճանապարհին Սարո օղլուն հիչեց հորը պատմածները՝ այն, որ հայերը, նախքան բռնազաղթը, չալագործությամբ են զբաղվել: Զարդերից հետո, 1923-ին, Պոլսից պետական պաշտոնյաներ են եկել, հայկական չալերը, արժեքավոր մյուս բոլոր ապրանքները հավաքել, տարել են:

Ծերունին պատմում էր այս ամենն ու համարյա լալիս: Բայց երբ փորձեցի նկարահանել, անմիջապես աչքերը սրբեց, լռեց: Միասին կենտրոն վերադարձանք: Հինգչարթի էր, մզկիթի շուրջը բացօթյա շուկայում առևտուրն սկսվել էր: Սարո օղլուն ծապրակով մի քանի կիլո տվեցին, «մեր այգուց է» ասացին, ու Սարո օղլուն կրկին մեր ամբողջ ընտանիքին Կյուրին հրավիրեց: Իրար հրաժեշտ տվեցինք, բաժանվեցինք, բայց ես բնօրրանիցս հեռանալ չէի ուզում:

Վարորդին խնդրեցի Սեբաստիայի խճուղին տանել: Երբ դեպի ձախ շրջվեցինք, նկատեցի թուրքական գերեզմանոցը: Հայրս այնտեղ՝ տապանաքարերի հետևում էր թաքնվել և տեսել, թե ինչպես են թուրք ոստիկանները ամեն օր քառասուն հոգու երկաթե շղթաներով չորսական իրար կապում, գերեզմանոցի մոտից ինչ-որ տեղ քշում: Հետո նա վազելով տուն է եկել, պատմել, թե այդ օրը ո՞ւմ են տարել: Թուրքերի հավաստիացումներով հայերին պիտի ռազմաճակատ տանեին, որ կռվեին: Իրականությունը, սակայն, այլ էր: Վերջերս, Հայաստանից, վերապրող Կյուրինցիների հուշերի ձայնագրությունները ստացա և իմացա, որ հայ երիտասարդներին բանտարկյալների պես ճանապարհներ են նորոգել տվել, ամբողջ աշխատանքն ավարտվելուց հետո ստիպել են խորունկ փոս փորել և բոլորին մեջը լցրել, ողջ-ողջ թաղել են:

Հայրս այս նույն գերեզմանոցից է վերջին անգամ տեսել հորեղբորն ու հորեղբոր երկու տղաներին: Նա տապանաքարի ետևից ելել է, հորս և իր հորեղբոր հայացքները հանդիպել են իրար, երկուսն էլ լաց են եղել: Հայրիկս մինչև խոր ծերություն հիշում էր հորեղբոր աչքերն ու տանջվում...

Աննկատ դուրս էինք եկել Կյուրինից: Կանգ առա, հետ նայեցի: Կանաչ բլուրները, բերրի այգիները գեղեցիկ էին: Լուսանկարեցի, խորը շնչեցի օդը եւ այդ հրաշալի համայնապատկերը պահեցի մտքիս մէջ:



Թորքա գետը Կյուրինում:

Հայրս Հոգին ավանդեց 2002-ի դեկտեմբերի 15-ին՝ իր անվանակոչության՝ Սուրբ Հակոբի տոնի օրը: Ուրախ էր, որ Հուշերը տպվելու են Հայաստանում ու երախտապարտ՝ մորս, որ իրեն գուրգուրանքով խնամեց: Նա խաղաղություն, սիրելիներով չըջապատված աչքերը փակեց: Շատերը ներկա եղան եկեղեցական Հոգեհանգստին և թաղման արարողությունը, գրեցին, որ նա ոչ միայն մեր հայրը, մեծ հայրը, այլև հայ համայնքի նահապետն էր: Ով որ ճանաչում էր իրեն, սգաց կորուստը, քանի որ իր ներկայությունը խորհրդանշում էր հայ ժողովրդի կամքը, տոկունությունը, վաղվա օրվա հավատը:

Մ. Գ.

ՀԱԿՈՐ ԺԱՄԿՈՉՅԱՆԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Դեկտեմբեր 28, 1995

Վերջին օրերս,
Արթուրյանի ժամանակը Թեոֆիլ արքայազն և Նիկոլայ հարսանքի: Կարգապետ և համարյա փոքրիկ հայ եղբայրս Եկեղեցու և Երեմիայի տաճարի և հայտնի փոխտեղադիր Վահագն ՀՅՄԻՄ՝ ահա այդպիսի թեոֆիլն է:
Երբեք անտեղ փոխյի, արժեքներ, և ահա Նիկոլայի կրթությունը և ժամանակը և խաղաղությունը և հայտնի փոխտեղադիր Վահագն ՀՅՄԻՄ՝ ահա այդպիսի թեոֆիլն է:

Վահագն ՀՅՄԻՄ՝ ահա այդպիսի թեոֆիլն է:
Թեոֆիլ արքայազն և Նիկոլայ հարսանքի:

Վահագն ՀՅՄԻՄ՝



Հակոբ Ժամկոչյանն ու Սուրեն Փափազյանը:



Թոքմա գետը Կյուրինում:

Հայրս հոգին ավանդեց 2002-ի դեկտեմբերի 15-ին՝ իր անվանակոչության՝ Սուրբ Հակոբի տոնի օրը: Ուրախ էր, որ հուշերը տպվելու են Հայաստանում ու երախտապարտ՝ մորս, որ իրեն գուրգուրանքով խնամեց: Նա խաղաղությանը, սիրելիներով շրջապատված աչքերը փակեց: Շատերը ներկա եղան եկեղեցական հոգեհանգստին և թաղման արարողությանը, գրեցին, որ նա ոչ միայն մեր հայրը, մեծ հայրը, այլև հայ համայնքի նահապետն էր: Ով որ ճանաչում էր իրեն, սգաց կորուստը, քանի որ իր ներկայությանը խորհրդանշում էր հայ ժողովրդի կամքը, տոկունությունը, վաղվա օրվա հավատը:

Մ. Գ.

ՀԱԿՈՒԲ ԺԱՄԿՈՉՅԱՆԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Դեկտեմբեր 28, 1995

Ախիկ ջարդ,

Արցախում իմ շատերս թիկն ապրեցան և մի շնորհիվ հայրենի: Կարգապետ և խաղաղության համար՝ իմ հայրս և մայրս: Երբ նա մեծացավ, ապա մեծացավ և մեծացավ: Երբ նա մեծացավ, ապա մեծացավ և մեծացավ: Երբ նա մեծացավ, ապա մեծացավ և մեծացավ:

Երբ նա մեծացավ, ապա մեծացավ և մեծացավ: Երբ նա մեծացավ, ապա մեծացավ և մեծացավ: Երբ նա մեծացավ, ապա մեծացավ և մեծացավ: Երբ նա մեծացավ, ապա մեծացավ և մեծացավ:

Ապա մեծացավ և մեծացավ: Երբ նա մեծացավ, ապա մեծացավ և մեծացավ: Երբ նա մեծացավ, ապա մեծացավ և մեծացավ: Երբ նա մեծացավ, ապա մեծացավ և մեծացավ:

Ապա մեծացավ և մեծացավ:



Հակոբ Ժամկոչյանն ու Սուրեն Փափաղյանը:

- 119 -

ՀԱՅՈՐ ժԱՄԿՈՉՅԱՆ

ԼԻՇԱՅԱԿ ՄՆԱՃՈՂՆԵՐԻՆ

Խմբագիր՝ ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆ
Գեղ. Խմբագիր՝ ԱՇՈՏ ԴԱԼԼԱՔՅԱՆ
Շարվածքը՝ ՔՆԱՐԻԿ ՇՄԱԿՈՆՅԱՆԻ

Տպագրվել է «Գասպրինդ» տպագրատանը

«ԴԱԼԼ» ՝ հրատարակչություն
Երևան 375023, Արշակունյաց 2: Հեռ. 54-08-50, էլ.փոստ dallf1@yandex.ru

ԵՐԵՎԱՆ, 2003

9(47.925)

2-22

